Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2879

491.99-5
U-41

У-3 №14

2010

491.542-5
Մ-42

ՀԱՄԱՌՕՏ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ի ՊԷՏՍ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍԱՐԳԻՍ ՔՀ. ՄԱՔՍԸՄԱՃԵԱՆՑ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԵՑԻ

2002

ԹԷՈԴՈՍԻԱ

*Ի Տպարանի Խալիբեան Ուսումնարանին*

**1870 = ՌՅԺԹ.**

491.99-5

ՀԱՄԱՌՕՏ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ի ՊԷՏՍ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍԱՐԳԻՍ ՔՀ. ՄԱՔՍԸՄԱՃԵԱՆՑ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ



ԹԷՈԴՈՍԻԱ

*Ի Տպարանի Խալիբեան Ուսումնարանի ազգիս Հայոց*

**1870 = ՌՅԺԹ.**

12012

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 20 Октября 1869 года.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.
Բաժանումն.
Գիր, վանկ եւ բառ.
Հայկական թուանշանք,
  և գիրը.
Պարզ, բարդ, բաղադրեալ եւ ածանցական բառերը.

ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ.

ԱՆՈՒՆ.
Գոյական եւ ածական.
Ածական վերջաւորութիւնք.
Անուան պարագայք.
Անուան թիւր.
Անեզական անուանք.
Անյոգնական անուանք.
Եզակի վերջաւորութիւնք, որք ունին յոգնակի նշանակութիւն.
Անուան հոլովը.
Ուղղական.
Սեռական.
Տրական, վերջահոլով տրական եւ նախդրիւ տրական.
Հայցական, եւ նորա միւս նշանակութիւնը.
Բացառական.
Պատմական.
Գործիական.
Պարառական.
Ներգոյական.
Կոչական.
Անուանց հոլովմունքը.
Արտուղի հոլովմունք.
ԴԵՐԱՆՈՒՆ
Տեսակ դերանուան.
Դէմք.
Գոյական եւ ածական դերանունք.
Հոլովումն դերանուանց.
Թուական անուանք.
Բաժանումն.
Բացարձակ եւ դասական.
Հոլովումն թուական անուանց.
ԲԱՅ.
Տեսակ բայից.
Դէմք.
Դիմաւոր եւ դիմազուրկ բայեր.
Ժամանակ.
Եղանակ.
Խոնարհմունք.
,, կանոնաւոր եւ անկանոն.
Լծորդութիւն *ամ*, *եմ*, *իմ*, *ում*.
Խոնարհումն էական բայից.
Ա. օրինակ *ամ* լծորդութեան.
Բ օրինակ *ամ* լծորդութեան.
Ա. օրինակ *եմ* լծորդութեան.
Բ օրինակ *եմ* լծորդութեան.
Գ օրինակ *եմ* լծորդութեան.
Ա. օրինակ *ում* լծորդութեան.
Բ օրինակ *ում* լծորդութեան.
Անկանոն բայք.
Խոնարհումն անկանոն բայից.
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.
Ընդունելութեան *ող*, *եալ*, *լի*, *լոց* վերջաւորութիւնքը.
Ժամանակ.
Ծանօթութիւն *լոց* վերջաւորութեան վերայ.
ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Բաժանումն—հոլովակերտ նախդիրք եւ հոլովառու նախադրութիւնք.
ՄԱԿԲԱՅ.
ՇԱՂԿԱՊ.
ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.
Օրինակ լուծման.
Համաձայնութիւն.
Ենթակայ (տէր բայի).
Ստորոգեալ (բայ).
Խնդիր.
Բացայայտիչ եւ բացայայտեալ.
Յատկացուցիչ եւ յատկացեալ.
Համաձայնութիւն ածական անուանց ընդ գոյականաց.
Խնդրառութիւն *ող* եւ *իչ* վերաջաւորութեանց.
Խնդրառութիւն բայից.
Առանձին խնդրառութիւն բայից ոմանց.
Նշանակութիւնք նախադրութեանցըս *ընդ*, *ըստ*, *առ*, *առընթեր* զանազան հոլովմանց.
Նշանագիծք կետադրութեան.
Օրինակ լուծման։


# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ.

---

*Հ. Զի՞նչ է քերականութիւնը.*

*Պ. Քերականութիւնն է արուեստ, որ կսովրեցընէ ուղիղ խօսել եւ գրել։*

*Հ. Քանի՞ մաս կբաժնուի Հայոց քերականութիւնը.*

*Պ. Հայոց քերականութիւնը կբաժնուի երկու մաս, բառագննութիւն եւ համաձայնութիւն։*

*Հ. Զի՞նչ պէտք է նկատել բառագննութեան մէջ.*

*Պ. Բառագննութեան մէջ պէտք են նկատել՝ գիր, վանկ եւ բառ։*

*Հ. Ո՞րն է գիրը.*

*Պ. Գիրը մեր երեսունեւինն տառերն են. ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ . . . . եւ այլն։*

*Հ. Քանի՞ կարգ կբաժնուին այս տառերը.*

*Պ. Երկու կարգ, ձայնաւոր եւ բաղաձայն.—ձայնաւորներն են. ա, ե, է, ը. ի, ո, օ. իսկ մնացեալները բաղաձայն են։*

*Հ. Այս գրերը ուրիշ խօսքով ինչպէս կանուանին.*

*Պ. Սոքա կանուանին նաեւ Հայկական թուանշանք եւ կգործածուին այսպէս, ա-էն՝ մինչեւ ժ=10, ժ-էն՝ մինչեւ ի=20 . . . . ղ-էն մինչեւ ճ=100, մ=200, յ=300 . . . . չ=900, ռ=1000, ս=2000, վ=3000 . . . . ք=9000. օրինակի համար 445=նխե, 1869=ռըկթ։*

*Հ. Քանի՞ տեսակ է եւ գիրը.*

*Պ. Եւ գիրը երկու տեսակ է, միատառ, եւ երկտառ։*

Հ. Ե՞րբ պէտք է միատառը գրել, եւ Երբ երկտառը.

Պ. Միատառը՝ որ է այս և-ը կգրուի խօսքին մէջտեղը. իսկ երկտառը՝ որ է այս եւ-ը, կգրուի խօսքին սկզբէն:

Հ. Զ՞ինչ է վանկը.

Պ. Վանկը այն ձայնն է՝ որ մէկ հնչմամբ կարտաբերուի մարդոյ բերնէն, կամ բառի մը մասն միայն, եւ կամ ամբողջ բառը, ինչպէս հե-ղու-թիւն, քա-ղաք, հայր, գետ:

Հ. Զ՞ինչ է բառը.

Պ. Բառ կըսուի մարդոյ բերնէն ելած այն ձայնն, որ նշանակութիւն ունի, ինչպէս՝ ջուր, տուն, հաց, ամպ, երթամ, բայց, այժմ:

Հ. Քանի՞ տեսակ է բառը.

Պ. Չորս տեսակ, պարզ կամ նախատիպ, բարդ, բաղադրեալ եւ ածանցական:

Հ. Ո՞րն է պարզ բառը.

Պ. Պարզ բառը այն է, որ ուրիշ բառի հետ միացած չէ, ինչպէս, գետ, ուխտ, ազգ:

Հ. Ո՞րն է բարդ բառը.

Պ. Բարդ կըսուի այն բառը՝ որ ուրիշ մէկ կամ շատ բառերէ կազմուած է. ինչպէս, գետափն, ուխտադրուժ, վեհանձն, տպագրատուն, արծաթափոխատու, կրօնաւորաստան:

Հ. Ո՞րն է բաղադրեալը.

Պ. Բաղադրեալ կըսուի այն բառը, որ սկզբէն մասնիկ ունի իրեն հետ միացած, ինչպէս. իմաստ, անիմաստ, բիծ, անբիծ, տգեղ, ապերախտ:

Հ. Ո՞րն է ածանցեալ բառը.

Պ. Ածանցեալ բառն այն է, որ վերջէն աննշան մասնիկ ունի իրեն հետ միացած. ինչպէս, իմաստ, իմաստութիւն. արդ, արդեան. մարդ, մարդկային. մահ, մահացու. լոյս, լուսաւոր:



Հ. Հայոց լեզուի բոլոր բառերը քանի՞ դաս կբաժնուին.

Պ. Ութը դաս, որք են. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ եւ ձայնարկութիւն:

Հ. Որո՞նք սոցամէն հոլովելի են, եւ ո՞յք անհոլովելի.

Պ. Սոցամէն առաջին չորսը հոլովելի են, իսկ վերջինները անհոլովելի:

Հ. Սոքա ամէնքը իմիասին ինչպէս կանուանին.

Պ. Սոքա ամէնքը իմիասին կանուանին մէկ խօսքով մասունք բանի:

## ԱՆՈՒՆ.

Հ. Զ՞ինչ ցուցանէ անունը.

Պ. Անունը ցուցանէ առարկայի մը զինչ կամ որպիսի լինելը, ինչպէս՝ մարդ, գրիչ, գիրք, առաքինի, փառաւոր, օգտակար:

Հ. Քանի՞ տեսակ է անունը.

Պ. Երկու տեսակ, գոյական եւ ածական:

Հ. Զ՞ինչ ցուցանէ գոյական անունը.

Պ. Գոյական անունը ցուցանէ առարկայի մը ո՞վ կամ զինչ լինելը, ինչպէս. ո՞վ,—մարդ. զինչ,—տուն:

Հ. Քանի՞ տեսակ է գոյական անունը.

Պ. Գոյական անունը երեք տեսակ է, յատուկ, հաւաքական եւ ընդհանուր:

Հ. Ո՞րն է յատուկ անունը.

Պ. Յատուկ կըսուին մարդկանց ու տեղերու անունները. ինչպէս. Հայկ, Ղազարոս, Նախիջեւան, Նողայօք, Մասիս, Տիգրիս եւ այլն:

Հ. Զի՞նչ ցուցանէ հաւաքականը.

Պ. Հաւաքականը ցուցանէ միատեսակ թէ՛ կենդանի եւ թէ անկենդան առարկայից բազմութիւնը կամ ժողովը, ինչպէս. անտառ, գունդ, հօտ, խումբ, ատեան, եկեղեցի եւ այլն:

Հ. Ո՞րն է ընդհանուր անունը.

Պ. Բաց ի յատուկ եւ հաւաքական անուններէն միւս անուանք ընդհանուր կըսուին, ինչպէս. մարդ, հող, վանք, ծառ եւ այլն:

Հ. Զի՞նչ ցուցանէ ածական անունը.

Պ. Ածական անունը ցուցանէ՝ առարկայի մը որպիսութիւնը, ինչպէս. մեծ տուն, բարի մարդ, ուսումնասէր աշակերտ. մեծ, բարի, ուսումնասէր անունները ածական են. իսկ տուն, մարդ, աշակերտ գոյական են:

Հ. Քանի՞ տեսակ կբաժնուի ածական անունը.

Պ. Ածական անունը երեք տեսակ կբաժնուի, դրական, բաղդատական եւ գերադրական:

Հ. Զի՞նչ ցուցանէ դրական ածականը.

Պ. Դրական ածականը ցուցանէ գոյականի որպիսութիւնը, առանց յաւելացնելու կամ նուազեցնելու անոր նշանակութիւնը, ինչպէս. ողորմած, մաքուր, լուսաւոր, բարձր:

Հ. Զի՞նչ ցուցանէ բաղդատական ածականը.

Պ. Բաղդատական ածականը ցուցանէ կրկին որպիսութիւնը՝ յաւելացնելով կամ նուազեցնելով, եւ կկազմուի դրականի վերջէն գոյն մասնիկը յաւելացնելով, ինչպէս. ողորմածագոյն, մաքրագոյն, լուսաւորագոյն, եւ այլն:

Հ. Զի՞նչ ցուցանէ գերադրական ածականը.

Պ. Գերադրական ածականը ցուցանէ գոյականի որպիսութիւնը յոյժ յաւելացնելով կամ յոյժ նուազեցնելով, եւ կկազմուի դրականի սկզբէն յաւելացնելով այս մասնիկները. յոյժ, կարի, գեր, ամեն,



ինչպէս. յոյժ ողորմած, ամենամեծ, կարի դժուարին, գերարժան, եւ բաղդատականի վերջէն եւս մասնիկը դնելով, ինչպէս. մաքրագոյն եւս, նրբագոյն եւս, կամ սկզբէն՝ եւս կարմրագոյն, եւս երկարագոյն:

Հ. Ուրիշ ո՞ր վերջաւորութիւնքը ածական են.

Պ. Այս վերջաւորութիւնքը. ւոր, յին, կան, եան, ցի, ի, ուն, օտ, ինչպէս. երկնաւոր, մարդկային, արքունական, թորգոմեան, իսրայէլացի, քաղաքացի, իմաստուն, համառօտ:

## ՊԱՐԱԳԱՅՔ ԱՆՈՒԱՆ.

Հ. Զի՞նչ պարտ է որոշել անուան մէջ.

Պ. Պարտ է որոշել անուան պարագայքը:

Հ. Քանի՞ պարագայ ունի անունը.

Պ. Անունն ունի չորս պարագայ, սեռ, թիւ, հոլով եւ հոլովումն:

Հ. Քանի՞ սեռ ունի անունը.

Պ. Չորս սեռ. արական, իգական, հասարակ եւ չեզոքական:

Հ. Զի՞նչ ցուցանէ արական սեռը անուան.

Պ. Արական սեռը անուան ցուցանէ զարու կենդանի, ինչպէս. Պետրոս, Յովհաննէս, այր, մանուկ, հաւ (հօր հայր); ցուլ, աքաղաղ:

Հ. Զի՞նչ ցուցանէ իգականը.

Պ. Իգականը ցուցանէ էգ կենդանի, ինչպէս. Մարիամ, Եւայ, մայր, քոյր, կին, հաւ եւ այլն:

Հ. Հասարակ սեռը անուան զի՞նչ ցուցանէ.

Պ. Անուան հասարակ սեռը ցուցանէ միով անուամբ եւ զարու եւ էգ, ինչպէս. զաւակ, երեխայ, ձի, գառն, արջ, կորիւն:

Հ. Զի՞նչ ցուցանէ չեզոքական անունը.

Պ. Չեզոքական անունը ցուցանէ այնպիսի անուանք որ ոչ արական ունին եւ ոչ իգական, ինչպէս. յոյս, հուր, քաղցրութիւն, այգի:

## ԹԻՒ ԱՆՈՒԱՆ.

Հ. Զի՞նչ ցուցանէ անուան թիւը.

Պ. Անուան թիւը ցուցանէ անուան մէկ կամ շատ լինելը.

Հ. Քանի՞ թիւ ունի անունը.

Պ. Երկու՝ եզակի եւ յոգնակի:

Հ. Ո՞րն է եզակի թիւը.

Պ. Եզակի թիւն այն է՝ որ մէկ իր միայն կցուցանէ, ինչպէս. բան, արքայ, աթոռ:

Հ. Զի՞նչ ցուցանէ յոգնակի թիւը.

Պ. Յոգնակի թիւը ցուցանէ միութենէն աւելի, եւ կկազմուի ք տառը յաւելացնելով յեզականի վերայ, ինչպէս. եզակի բան, յոգնակի բանք. արքայ, արքայք. աթոռ, աթոռք:

Հ. Կա՞ն անուանք որք եզակի միայն ունին եւ յոգնակի չունին.

Պ. Այն կան, ինչպէս. յոյս, լոյս, սէր, սուգ, մուր, քուն, խաւար, խեղճ, տիւ, որք յոգնակի չունենալուն համար՝ անյոգնական կըսուին:

Հ. Կա՞ն այնպիսի անուանք ալ որք յոգնակի միայն ունին, իսկ եզակի չունին.

Պ. Այն կան, ինչպէս. հարք, փառք, դժոխք, փափաքք, կուռք, ծախք, ընթրիք, կարծիք, որք եզակի չունենալուն համար՝ անեզական կըսուին.



Հ. Ուրիշ ո՞ր եզակի վերջաւորութիւնքը յոգնականի նշանակութիւն ունին.

Պ. Այս վերջաւորութիւնքը՝ անի, եանի, ական, տի, որք եզակի ձայնիւ յոգնականի նշանակութիւն ունին, ինչպէս. նամականի, նամակք. բազմական, բազմոկք. նախարարեան, նախարարք. մանկտի, մանկունք:

## ՀՈԼՈՎՔ ԱՆՈՒԱՆ.

Հ. Զի՞նչ է հոլովը.

Պ. Հոլովն է անուան սկզբէն կամ վերջէն եւ կամ միանգամայն սկզբէն ու վերջէն փոփոխուիլը, ինչպէս բառ, բառի. զբառ, իբառէ:

Հ. Քանի՞ հատ է հոլովը.

Պ. Տասը հատ, որք են. ուղղական, սեռական, տրական հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական,ներգոյական եւ կոչական:

Հ. Զի՞նչ ցուցանէ ուղղական հոլովը.

Պ. Ուղղական հոլովը ցուցանէ առարկայի մը զինչ լինելը պարզապէս, եւ կպատասխանէ այս հարցմանց. ով կամ ինչ, (ով է կամ ինչ է):

Սեռական հոլովը ցուցանէ՝ առարկայի մը որուն ըլլալը, եւ կպատասխանէ հարցմանցս. ոյր, որոյ, (որինն է ինչինն է):

Տրական հոլովը կըյայտնէ առարկայի մը ումին տրուիլն ու զարնուիլը՝ եւ կպատասխանէ հարցմանցս. ում, յո, առ ո. (ումին, ուր տեղ, դէպի ումին, դէպի ինչին)

Հ. Քանի՞ տեսակ է տրական հոլովը.

Պ. Տրական հոլովը երկու տեսակ է. մէկը կըսուի վերջահոլով տրական եւ կպատասխանէ հարցմանս

ո՞ւմ. իսկ միւսը կանուանի Նախդրիւ տրական, որ կըպատասխանէ հարցմանց՝ ո՞ւր, յո՞, առ ո՞:

Հայցական հոլովը կպատասխանէ հարցմանց. զո՞, զի՞նչ. սա կըանի նաեւ գործողութեան տեւողութիւնը ցոյց տալու համար, զոր օրինակ. Յովնան եղեւ ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս: Զամենայն աւուրս կենաց իմոց ոչ դադարեցայց գովել զքեզ:

Բացառական հոլովը ցուցանէ առարկայի մը ուսկից ելնելն ու ծագիլը, եւ կպատասխանէ հարցմանց. յո՞ւմէ, ուստի՞, (ուսկէ՞ն, ինչէ՞ն, ի՞նչ տեղէն):

Պատմական հոլովը կցուցընէ մէկու մը կամ մէկ բանի մը վրան. եւ կպատասխանէ հարցմանց. զո՞ւմէ, զմէ՞, (ումի՞ն վրայօք, ինչի՞ն վրայ):

Գործիական հոլովը կը յայտնէ գործողութեան մը որուն ձեռքով կամ ինչով լինելն ու կատարուիլըն, եւ կպատասխանէ հարցմանց ո՞րով, ի՞ւ, (որո՞ւն ձեռքով, ինչո՞վ):

Պարառական հոլովը կցուցընէ մէկու մը կամ մէկ բանի բոլորտիքը կամ չորս կողմը, ու կպատասխանէ հարցմանց. զո՞րով, զի՞ւ, (որի՞ն չորս դին, ինչի՞ն բոլորտիքը):

Ներգոյականը կըյայտնէ՝ բանի մը ո՛ւր լինելն ու երբ կատարուիլը, եւ կպատասխանէ հարցմանց. ո՞ւր, յո՞ւրում, յո՞րժամ, (ո՞ր տեղ, ինչի՞ն մէջ, երբ):

Կոչականը նոյն իսկ ուղղականին պէս է, բայց կանչելու մաքով գործածուելուն համար ո՜վ կամ ո՜ մասնիկը յաւելցուած է վրան, ինչպէս. ո՜վ տէր, ո՜ արք, ո՜վ ազգ. երբեմն ալ առանց այս մասնիկներուն, ինչպէս. որդեակ, բժիշկ, այսինքն ո՜վ բժիշկ, ո՜վ որդեակ:



## ՀՈԼՈՎՄՈՒՆՔ ԱՆՈՒԱՆՑ.

Հ. Զի՞նչ են հոլովմունք անուանց.

Պ. Հոլովմունք կըսուին սեռական ու գործիական հոլովներու վերջաւորութիւնքը:

Հ. Քանի՞ տեսակ է այս վերջաւորութիւնքը.

Պ. Ինը, որք են.

| Հոլովմունք. | ԵԶԱԿԻ. | | ՅՈԳՆԱԿԻ. | |
|---|---|---|---|---|
| | Սեռական. | Գործիական. | Սեռական. | Գործիական. |
| Ա. | ի. | իւ. | ից. | իւք. |
| Բ. | ի. | աւ. | աց. | օք. |
| Գ. | ոյ. | ով. | ոց. | ովք. |
| Դ. | ւոյ. | եաւ. | եաց. | եօք. |
| Ե. | ան. | ամբ. | անց. | ամբք. |
| Զ. | ին. | ամբ. | անց. | ամբք. |
| Է. | եր.<br>եղ. | երբ.<br>եղբ. | երաց, երց. | երօք.<br>երբք. |
| Ը. | ու. | իւ. | ուց. | ուք. |
| Թ. | այ.<br>եայ. | աւ.<br>եաւ. | չու | նի. |

Հ. Ո՞րն է առաջին հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնակի թուոց.

| Պ. Եզակի թիւ. | Յոգնակի թիւ. |
|---|---|
| Սեռ. *ի*, գործ. *իւ*. | Սեռ. *ից*, գործ. *իւք*. |
| Ո. բան. | բանք. |
| Ս. բանի. | բանից. |
| Տ. բանի, ի բան, ցբան, առ բան, ընդ բան. | բանից, ի բանս, ցբանս, առ բանս, ընդ բանս. |

| | |
|---|---|
| Հ. զբան. | զբանս. |
| Բ. ի բանէ. | ի բանից. |
| Պ. զբանէ. | զբանից. |
| Գ. բանիւ. | բանիւք. |
| Պ. զբանիւ. | զբանիւք. |
| Ն. ի բանի կամ ի բան. | ի բանս. |
| Կ. ով բան. | ով բանք: |

*Այսպէս կհոլովին նաեւ.* բառ, արքայ, փող, օդ, մայր (*չամ ծառ*), հաց, տօն, հրեայ, ուխտ, քայլ, արուեստ, ատեան, մատեան, բիծ, սիրտ, բրուտ, խեղճ, հանդէս, պատնէն, համբոյր, տոյժ, ծարոյր.—աղօթք, խնջոյք, արտօրայք, վանօրայք, համանգամայնք, ապագայք.

*Հ. Ե՞րբ կգրուին ի եւ յ նախդիրները.*

*Պ. Եթէ հոլովելի բառին առաջին տառը բաղաձայն լինի, այն ատեն ի նախդիրը կգրուի անոր վրայ, ինչպէս. ի հացէ, ի սրտէ. իսկ եթէ ձայնաւոր լինի՝ յ նախդիրը, ինչպէս՝ յեկեղեցի, յայգւոյ:*

*Հ. Ի՞նչպէս են երկրորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնակի թուոց.*

| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
|---|---|
| Սեռ. *ի*, գործ. *աւ*. | Սեռ. *աց*, գործ. *օք*. |
| Ո. բանակ. | բանակք. |
| Ս. բանակի. | բանակաց. |
| Տ. բանակի, ի բանակ, ցբանակ, առ. բանակ, ընդ բանակ. | բանակաց, ի բանակս, ցբանակս, առ. բանակս, ընդ բանակս. |
| Հ. զբանակ. | զբանակս. |
| Բ. ի բանակէ. | ի բանակաց. |
| Պ. զբանակէ. | զբանակաց. |
| Գ. բանակաւ. | բանակօք. |
| Պ. զբանակաւ. | զբանակօք. |
| Ն. ի բանակի. | ի բանակս. |
| Կ. ով բանակ. | ով բանակք: |



*Այսպէս կհոլովին.* կոնդակ, մշակ, ղենջակ, պատգամ, վանական, պարիսպ, բժիշկ, շաւիղ, մանեակ, մաշկեակ, մրրիկ, աղմուկ, ստրուկ, տզրուկ, քուրմ, դէտ, մէգ, վարագոյր, ուղեցոյց, բոյթ.—կեանք, կամք, արհաւիրք, փառք, բաղձանք:

*Հ. Ի՞նչպէս են երրորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը երկոցունց թուոց.*

| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
|---|---|
| Սեռ. *ոյ*, գործ. *ով*. | Սեռ. *ոց*, գործ. *ովք*. |
| Ո. գործ. | գործք. |
| Ս. գործոյ. | գործոց. |
| Տ. գործոյ, ի գործ, ցգործ, առ. գործ, ընդ գործ. | գործոց, ի գործս, ցգործս, առ. գործս, ընդ գործս. |
| Հ. զգործ. | զգործս. |
| Բ. ի գործոյ. | ի գործոց. |
| Պ. զգործոյ. | զգործոց. |
| Գ. գործով. | գործովք. |
| Պ. զգործով. | զգործովք. |
| Ն. ի գործ. | ի գործս. |
| Կ. ով գործ. | ով գործք: |

*Այսպէս կհոլովին.* արմատ, աթոռ, սափոր, փող, նիւթ, հարուած, իւղ, անդամ, ձու, ցու. թիւ, ուղի, հոգի, ոսկի, տունկ, շունչ, արշալոյս, մարմին, պատիւ, ներքին, վերջին, հանդերձեալ, երկնային, մարդկային.—յանցուածք, կուռք, պահք, տուրք, ստացուածք, կալուածք, խորք, ամօթ, հարաւ, հիւսիս *եւ այլն:*

*Սոյնպէս կհոլովին նաեւ բոլոր աներեւոյթ բայերը.* բանալ, բանալոյ, բանալով. գործել, գործելոյ, գործելով. թողուլ, թողլոյ, թողլով, *եւ այլն, որոց հոլովեալը կըսուի դերբայ:*

*Հ. Ի՞նչպէս են չորրորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնակի թուոց.*

| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
|---|---|
| Սեռ. *ոյ*, գործ. *աւ*. | Սեռ. *աց*, գործ. *օք*. |
| Ո. տեղի. | տեղիք. |
| Ս. տեղւոյ. | տեղեաց. |
| Տ. տեղւոյ, ի տեղի. | տեղեաց, ի տեղիս. |
| Հ. զտեղի. | զտեղիս. |
| Բ. ի տեղւոյ կամ ի տեղւոջէ. | ի տեղեաց. |
| Պ. զտեղւոյ կամ զտեղւոջէ. | զտեղեաց. |
| Գ. տեղեաւ. | տեղեօք. |
| Պ. զտեղեաւ. | զտեղեօք. |
| Ն. ի տեղւոջ. | ի տեղիս. |
| Կ. ով տեղի. | ով տեղիք: |

*Այսպէս կհոլովին նաեւ այն ամենայն անուանք որք կվերջաւորին ի եւ եայք, ինչպէս* եկեղեցի, աղաւնի, մատանի, այգի, կղզի, ռաբունի, դալարի, լեղի, միջերկրեայք, հայաստանեայք, այգեստանեայք, հայկազնեայք, երեկորեայք: — Հայաստանեայք, հայաստանեայց, հայաստանեօք. այգեստանեայք, այգեստանեայց, այգեստանեօք, *եւ այլն*:

*Հ. Ո՞րն է հինգերորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը երկուց թուոց.*

| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
|---|---|
| Սեռ. *ան*, գործ. *ամբ*. | Սեռ. *անց*, գործ. *ամբք*. |
| Ո. հիմն. | հիմունք. |
| Ս. հիման. | հիմանց. |
| Տ. հիման, ի հիմն. | հիմանց, ի հիմունս. |
| Հ. զհիմն. | զհիմունս. |
| Բ. ի հիմանէ. | ի հիմանց. |
| Պ. զհիմանէ. | զհիմանց. |
| Գ. հիմամբ. | հիմամբք. |
| Պ. զհիմամբ. | զհիմամբք. |
| Ն. ի հիման. | ի հիմունս. |
| Կ. ով հիմն. | ով հիմունք: |

*Այսպէս կհոլովին.* աղեղն, թիկն, ջերմն, որմն, երկն, կայծակն, թոռն, խոստումն, հեղումն, դուռն, աղջիկ, մանուկ, մասնիկ, փոքրիկ, անուն, տուն, պաշտօն, *եւ այլն*:



*Սոյնպէս կհոլովին նաեւ այն անուանք որք կվերջաւորին թիւն, իւն, ուստ, ուրդ, ունդ, ինչպէս.* զօրութիւն, արիւն, ձիւն, անկիւն, կորուստ, թագուստ, խորհուրդ, ժողովուրդ, հանգիստ, վաղիւ, տեսիլ, տիւ, ծնունդ, սնունդ, գարուն, աշուն, ամառն, ձմեռն, իրաւունք, արդիւնք, լորձունք:

---

*Հ. Ի՞նչպէս են վեցերորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնականի թուոց.*

| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
|---|---|
| Սեռ. *ին*, գործ. *ամբ*. | Սեռ. *անց*, գործ. ամբք. |
| Ո. խաշն. | խաշինք. |
| Ս. խաշին. | խաշանց. |
| Տ. խաշին, ի խաշն. | խաշանց, ի խաշինս. |
| Հ. զխաշն. | զխաշինս. |
| Բ. ի խաշանէ. | ի խաշանց. |
| Պ. զխաշանէ. | զխաշանց. |
| Գ. խաշամբ. | խաշամբք. |
| Պ. զխաշամբ. | զխաշամբք. |
| Ն. ի խաշին. | ի խաշինս. |
| Կ. ով խաշն. | ով խաշինք: |

*Այսպէս կհոլովին՝* գառն, կաթն, բեռն, եզն, նեռն, եղն, ազն, ստաշխն, սանդիտոռն, անձն, դաշն, մատն, ատամն, մասն, հարսն, ոտն, ձեռն, թոռն, խաշն, լեառն, *եւ այլն*:

Ծանօթութիւն. *Այն անուններն որ կվերջաւորին* ն *տառիւ՝ կհոլովուին ընդհանրապէս հինգերորդ կամ վեցերորդ հոլովմանց պէս*:

---

*Հ. Ո՞րն է եօթներորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնակի թուոց.*



3969
1007
34/13
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР

| | |
|---|---|
| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
| Սեռ. *եր*, *եղ*. գործ. *երբ*, *եղբ*. | Սեռ. *երց* կամ *երաց*, *եղաց*. գործ. *երբք*, *եղբք*. |
| Ո. աղբիւր. | աղբիւրք կամ աղբերք. |
| Ս. աղբեր. | աղբերաց կամ աղբերց. |
| Տ. աղբեր, յաղբիւր. | աղբերաց կամ աղբերց, յաղբիւրս կամ յաղբերս. |
| Հ. զաղբիւր. | զաղբիւրս կամ զաղբերս. |
| Բ. յաղբերէ. | յաղբերաց կամ յաղբերց. |
| ~~Պ. զաղբերէ.~~ | ~~զաղբերաց կամ զաղբերց.~~ |
| Գ. աղբերբ. | աղբիւրօք կամ աղբերբք. |
| ~~Պ. զաղբերբ.~~ | ~~զաղբիւրօք կամ զաղբերբք.~~ |
| Ն. յաղբիւր. | յաղբիւրս կամ յաղբերս. |
| Կ. ով աղբիւր. | ով աղբիւրք կամ աղբերք: |

*Այսպէս կհոլովին առ հասարակ անուանք որ կվերջաւորին ր եւ ղ տառիւք, ինչպէս.* դուստր, ուստր, տարր, կայսր, համր, ալիւր, եղջիւր, լիտր, եզր, սակր, ոսկր, սանտր, կղմինտր, աստղ, արկղ, անգղ, *եւ այլն:*

*Հ. Ի՞նչպէս են ութերորդ հոլովման սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը եզակի եւ յոգնակի թուոց.*

| | |
|---|---|
| *Պ. Եզակի թիւ.* | *Յոգնակի թիւ.* |
| Սեռ. *ու*, գործ. *ու* կամ *իւ*. | Սեռ. *ուց*, գործ. *ուք*. |
| Ո. գանձ. | գանձք. |
| Ս. գանձու. | գանձուց. |
| Տ. գանձու, ի գանձ. | գանձուց, ի գանձս. |
| Հ. զգանձ. | զգանձս. |
| Բ. ի գանձէ. | ի գանձուց. |
| ~~Պ. զգանձէ.~~ | ~~զգանձուց.~~ |
| Գ. գանձիւ. | գանձուք. |
| ~~Պ. զգանձիւ.~~ | ~~զգանձուք.~~ |
| Ն. ի գանձ. | ի գանձս. |
| Կ. ով գանձ. | ով գանձք: |

*Այսպէս կհոլովին* ծով, զգեստ, սպաս, այգ, ագռաւ, գրաստ, կաքաւ, նկար, քաղց, նախանձ, խրատ, զարդ, զէն, վրէժ, քէն, սով, կով, մոգ, առաւօտ, առիւծ, վարձ, դաս, վնաս, մահ, բարք, վարք, պարտք, *եւ այլն:*



*Այս հոլովման պէս կհոլովուին նաեւ այս անուանք, բայց քիչ մի տարբերութեամբ՝* թանձր — թանձու — ի թանձուէ, թանձք — թանձունք — ի թանձունց — թանձամբք, ծաղր — ծաղու — ծաղունք — ծաղուց — ծաղուք. փոքր, ծանր, մանր, մեղր, քաղցր, բարձր — բարձու — բարձամբ — բարձունք — բարձանց — բարձամբք:

---

*Հ. Որպիսի՞ անուանք կհոլովին յիններորդ հոլովման վերայ.*

*Պ. Յիններորդ հոլովման վերայ կհոլովին յատուկ անուանք միայն:*

*Հ. Ի՞նչպէս են յատուկ անուանց սեռականի եւ գործիականի վերջաւորութիւնքը.*

| | |
|---|---|
| *Պ. Եզակի.* | *Եզակի.* |
| Սեռ. *այ* կամ *եայ*. | Սեռ. *եայ*, գործ. *աւ*, *եաւ*. |
| Ո. Արշամ. | Հռիփսիմէ. |
| Ս. Արշամայ. | Հռիփսիմեայ. |
| Տ. Արշամայ, յԱրշամ. | Հռիփսիմեայ, ի Հռիփսիմէ. |
| Հ. զԱրշամ. | զՀռիփսիմէ. |
| Բ. յԱրշամայ. | ի Հռիփսիմեայ. |
| Պ. զԱրշամայ. | զՀռիփսիմեայ. |
| Գ. Արշամաւ. | Հռիփսիմեաւ. |
| Պ. զԱրշամաւ. | զՀռիփսիմեաւ. |
| Ն. յԱրշամ. | ի Հռիփսիմէ. |
| Կ. ով Արշամ. | ով Հռիփսիմէ: |

— Արամ, Տիգրան, Տրդատ, Մծբին, Մաժակ, Նարեկ, Խորէն, Դավրէժ, Սէթ, Եդեմ, Պարոյր, Անոյշ *եւ այլն:*

*Սոյնպէս կհոլովին նաեւ այն անուանք, որք կվերջաւորին էս, է, ղի, էլ, ա, աս, ինչպէս.* Արիստակէս, Հիւպոկրատէս, Գայիանէ, Վահէ, Աթանագինէ, Հեղի, Թեկղի, Աբէլ, Բէլ, Ելլադա (*սեռականը* Ելլադայ), Թէոդոսիա, Յուդա, Բառնաբաս, *եւ այլն:*

*Հ. Ի՞նչ գիտելիք կան առ հասարակ ա եւ աս վերջաւորած յատուկ անուանց սեռական հոլովին վերայ.*

*Պ. Յատուկ անուանք, որք կվերջանան ա-ով եւ աա-ով շատ անգամ անոնց սեռականը կձեւանայ միայն յ յաւելցնելով ա-ին ծայրը։*

*Հ. Ուրիշ վերջաւորուած անուանք ո՞ր հոլովման պէս կհոլովին.*

*Պ. Ուրիշ վերջաւորուած անուանք՝ որ միայն իգական սեռի նշանակութիւն ունին, կհոլովին չորրորդ հոլովման պէս.* Սրբուհի, Սրբուհւոյ. Ղամպեուհի, Ղամպեուհւոյ *եւ այլն։*

*Ծանօթութիւն Ա. Յատուկ անուններն չունին յոգնակի թիւ։*

*Բ. Յատուկ անուանց առաջին տառը մեծ գրով կըգրուի։*

---

## ԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՈՒՄՆ ԱՆՈՒԱՆՑ.

*Հ. Զի՞նչ է արտուղի հոլովումն անուանց.*

*Պ. Արտուղի կըսուի այն անուանց հոլովումն, որք կանոնաւոր հոլովմանէ կխոտորին։*

*Հ. Ո՞յք են այդ անուանք.*

*Պ. Այսոքիկ,* տէր, այր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, գիւղ, օր *եւ այլն։*

ՏԷՐ, ԱՅՐ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. տէր. | տեարք. |
| Ս. տեառն. | տեարց կամ տերանց. |
| Տ. տեառն, ի տէր. | տեարց, ի տեարս. |
| Հ. զտէր. | զտեարս. |
| Բ. ի տեառնէ. | ի տեարց կամ ի տերանց. |
| Պ. զտեառնէ. | զտեարց կամ զտերանց. |
| Գ. տերամբ. | տերամբք. |
| Պ. զտերամբ. | զտերամբք. |
| Ն. ի տեառն. | ի տեարս. |
| Կ. ով տէր. | ով տեարք։ |



*Այսպէս կհոլովին* կոչնատէր, պարտատէր, տանուտէր. այր — առն — արամբ, արք — արանց — արամբք. քեռայր, երկայր, տանայր։

ՀԱՅՐ, ՄԱՅՐ, ԵՂԲԱՅՐ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. հայր. | հարք. |
| Ս. հօր. | հարց կամ հարանց. |
| Տ. հօր, ի հայր. | հարց, ի հարս. |
| Հ. զհայր. | զհարս. |
| Բ. ի հօրէ. | ի հարց կամ ի հարանց. |
| Պ. զհօրէ. | զհարց կամ զհարանց. |
| Գ. հարբ. | հարբք. |
| Պ. զհարբ. | զհարբք. |
| Ն. ի հօր. | ի հարս. |
| Կ. ով հայր. | ով հարք։ |

*Այսպէս կհոլովին,* կնքահայր, նախահայր, կնքամայր, մայր, եղբայր, հօրեղբայր, տեառնեղբայր։

ՔՈՅՐ, ՄՕՐԱՔՈՅՐ, ՀՕՐԱՔՈՅՐ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. քոյր. | քորք. |
| Ս. քեռ. | քերց. |
| Տ. քեռ, ի քոյր. | քերց, ի քորս. |
| Հ. զքոյր. | զքորս. |
| Բ. ի քեռէ. | ի քերց. |
| Պ. զքեռէ. | զքերց. |
| Գ. քերբ. | քերբք. |
| Պ. զքերբ. | զքերբք. |
| Ն. ի քեռ. | ի քորս. |
| Կ. ով քոյր. | ով քորք։ |

*Այսպէս կհոլովին* հօրաքոյր, մօրաքոյր։

ԿԻՆ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. կին. | կանայք. |
| Ս. կնոջ. | կանանց. |
| Տ. կնոջ, ի կին. | կանանց, ի կանայս. |

| | |
|---|---|
| Հ. զկին. | զկանայս. |
| Բ. ի կնոջէ. | ի կանանց. |
| Պ. զկնոջէ. | զկանանց. |
| Գ. կնաւ կամ կանամբ. | կանամբք. |
| Պ. զկնաւ կամ զկանամբ. | զկանամբք. |
| Ն. ի կնոջ. | ի կանայս. |
| Կ. ո՛վ կին. | ո՛վ կանայք: |

*Այսպէս կհոլովին*, առնակին, միակին, անկին, տիկին, տանտիկին:

ԳԻՒՂ կամ ԳԵՕՂ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. գիւղ կամ գեօղ. | գիւղք կամ գեօղք. |
| Ս. գեղջ. | գիւղից կամ գեօղից. |
| Տ. գեղջ, ի գիւղ. | գիւղից, ի գիւղս. |
| Հ. զգիւղ կամ զգեօղ. | զգիւղս կամ զգեօղս. |
| Բ. ի գեղջէ. | ի գիւղից կամ ի գեօղից. |
| Պ. զգեղջէ. | զգիւղից. |
| Գ. գիւղիւ կամ գեօղիւ. | գիւղօք կամ գիւղիւք. |
| Պ. զգիւղիւ. | զգիւղօք կամ զգիւղիւք. |
| Ն. ի գեղջ կամ ի գիւղ. | ի գիւղս կամ ի գեօղս. |
| Կ. ո՛վ գիւղ. | ո՛վ գիւղք կամ գեօղք: |

*Այսպէս կհոլովին* քաղաքագիւղ, ձորագիւղ, նորագիւղ:

ՕՐ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. օր. | աւուրք. |
| Ս. աւուր. | աւուրց. |
| Տ. աւուր, յօր, ցօր. | աւուրց, յաւուրս. |
| Հ. զօր. | զաւուրս. |
| Բ. յօրէ. | յաւուրց. |
| Պ. զօրէ. | զաւուրց. |
| Գ. աւուրբ. | աւուրբք. |
| Պ. զաւուրբ. | զաւուրբք. |
| Ն. յաւուր կամ յօր. | յաւուրս. |
| Կ. ո՛վ օր. | ո՛վ աւուրք: |



## ԴԵՐԱՆՈՒՆ.

*Հ. Զի՞նչ է դերանունը.*

*Պ. Դերանունն է մասն բանի, որ կդրուի անուան տեղ:*

*Հ. Քանի՞ տեսակ է դերանունը.*

*Պ. Եօթն տեսակ, որք են,*

Ա. *Էական*, ես, դու, ինքն. իւր, իրերաց, միմեանց:

Բ. *Ցուցական*, սա, դա, նա. այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն:

Գ. *Յարաբերական*, որ:

Դ. *Դիմորոշական*, ս, դ, ն, *ս կցուցնէ՝* ես, *դ կցուցնէ* դու, *ն*—նա:

Ե. *Ստացական*, իմ, քո, իւր. մեր, ձեր. իմային, քոյային, իւրային:

Զ. *Հարցական*, ո՞վ, ո՞, ո՞ր, ի՞նչ, ո՞րպիսի, զի՞նչպիսի, քանի՞:

Է. *Անորոշ*, ումն, ոք. իմն, ինչ. այլ, միւս, ամէն, ամենայն, ամենեքեան, բոլորեքեան, համայն, բոլոր, իւրաքանչիւր, երկաքանչիւր, այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի:

*Հ. Քանի՞ կարգ կբաժնուին այս եօթը տեսակ դերանուանք.*

*Պ. Այս եօթը տեսակ դերանուանք կբաժնուին երկու կարգ* գոյական *եւ* ածական.

*Հ. Ո՞յք ստացմէն գոյական են եւ ո՞յք ածական.*

*Պ. Ստացմէն առաջին երեքը, այսինքն* էական, ցուցական *եւ* յարաբերական *դերանունները գոյական են, իսկ մնացեալ չորսը՝ ածական:*

*Հ. Քանի՞ դէմք ունի դերանունը.*

*Պ. Դերանունն ունի երեք դէմք, առաջինը կցուցնէ* ես, մեք, ս. *երկրորդը* — դու, դուք, դ. *երրորդը* — նա, նոքա, ն:

*Հ. Քանի՞ թիւ ունի դերանունը.*

*Պ. Դերանունն ունի երկու թիւ եւ լինը հոլով:*

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

### ԵՍ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. ես. | մեք. |
| Ս. իմ. | մեր. |
| Տ. ինձ, յիս, ցիս, առ իս, ընդ իս. | մեզ, ի մեզ, ցմեզ, առ մեզ, ընդ մեզ. |
| Հ. զիս. | զմեզ. |
| Բ. յինէն. | ի մէնջ. |
| Պ. զինէն. | զմէնջ. |
| Գ. ինեւ. | մեօք. |
| Պ. զինեւ. | զմեօք. |
| Ն. յիս. | ի մեզ։ |

### ԴՈՒ.

| | |
|---|---|
| Ո. դու. | դուք. |
| Ս. քո. | ձեր. |
| Տ. քեզ, ի քեզ, ցքեզ, առ քեզ, ընդ քեզ. | ձեզ, ի ձեզ, ցձեզ, առ ձեզ, ընդ ձեզ. |
| Հ. զքեզ. | զձեզ. |
| Բ. ի քէն. | ի ձէնջ. |
| Պ. զքէն. | զձէնջ. |
| Գ. քեւ. | ձեօք. |
| Պ. զքեւ. | զձեօք. |
| Ն. ի քեզ. | ի ձեզ։ |

### ԻՆՔՆ.

| | |
|---|---|
| Ո. ինքն. | ինքեանք. |
| Ս. ինքեան. | ինքեանց. |
| Տ ինքեան, յինքն. | ինքեանց, յինքեանս. |
| Հ. զինքն. | զինքեանս. |
| Բ. յինքենէ. | յինքեանց. |
| Պ. զինքենէ. | զինքեանց. |
| Գ. ինքեամբ. | ինքեամբք. |
| Պ. զինքեամբ. | զինքեամբք. |
| Ն. յինքեան. | յինքեանս։ |



### ԻՒՐ.

| | |
|---|---|
| Ո. — | իւրեանք. |
| Ս. իւր կամ իւրեան. | իւրեանց. |
| Տ. իւր կամ իւրեան, առ իւր. | իւրեանց, առ իւրեանս. |
| Հ. զիւր. | զիւրեանս. |
| Բ. յիւրմէ. | յիւրեանց. |
| Պ. զիւրմէ. | զիւրեանց. |
| Գ. իւրեւ կամ իւրեամբ. | իւրեամբք. |
| Պ. զիւրեւ կամ զիւրեամբ. | զիւրեամբք. |
| Ն. յիւր կամ յիւրեան. | յիւրեանս։ |

| ԻՐԵՐԱՑ. | ՄԻՄԵԱՆՑ. |
|---|---|
| Ո. — | — |
| Ս. իրերաց. | միմեանց. |
| Տ. իրերաց ցիրեարս. | միմեանց, ցմիմեանս. |
| Հ. զիրեարս. | զմիմեանս. |
| Բ. յիրերաց. | ի միմեանց. |
| Պ. զիրերաց. | զմիմեանց. |
| Գ. իրերօք. | միմեամբք. |
| Պ. զիրերօք. | զմիմեամբք. |
| Ն. յիրեարս։ | ի միմեանս։ |

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

### ՍԱ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. նա. | նոքա. |
| Ս. նորա. | նոցա, կամ նոցուն. |
| Տ. նմա, ի նա. | նոցա առ նոսա. |
| Հ. զնա. | զնոսա. |
| Բ. ի նմանէ. | ի նոցանէ. |
| Պ. զնմանէ. | զնոցանէ. |
| Գ. նովաւ. | նոքօք. |
| Պ. զնովաւ. | զնոքօք. |
| Ն. ի նմա. | ի նոսա, կամ ի նոսին. |

*Այսպէս կհոլովին՝* սա, դա, *որոց յոգնակի գործածականն է սոքումբք, դոքումբք։*

### ԱՅՍ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. այս. | այսք կամ այսոքիկ. |
| Ս. այսր կամ այսորիկ. | այսց կամ այսոցիկ. |
| Տ. այսմ կամ այսմիկ, առ. այս. | այսց կամ այսոցիկ, առ. այսոսիկ. |
| Հ. զայս. | զայսոսիկ. |
| Բ. յայսմանէ. | յայսց կամ յայսցանէ. |
| Պ. զայսմանէ. | զայսց կամ զայսցանէ. |
| Գ. այսու կամ այսուիկ. | այսոքիւք կամ այսոքիմբք. |
| Պ. զայսու կամ զայսուիկ. | զայսոքիւք կամ զայսոքիմբք. |
| Ն. յայսմ կամ յայսմիկ. | յայսոսիկ: |

*Այսպէս կհոլովին* այդ, այն:

### ՍՈՅՆ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. սոյն. | սոյնք կամ սոքին. |
| Ս. սորին. | սոցունց կամ սոցին. |
| Տ. սմին ի սոյն. | սոցունց կամ սոցին, ի սոյնս. |
| Հ. զսոյն. | զսոյնս. |
| Բ. — | ի սոցունց. |
| Պ. — | զսոցունց. |
| Գ. սովին, կամ սովիմբ. | սովիմբք կամ սոքումբք. |
| Պ. զսովին, կամ զսովիմբ. | զսովիմբք կամ զսոքումբք. |
| Ն. ի սոյն. | ի սոյնս կամ ի սոսին: |

*Այսպէս կհոլովին* դոյն, նոյն:

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

### ԻՄ.

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. իմ. | իմք. |
| Ս. իմոյ. | իմոց. |
| Տ. իմում, առ. իմ. | իմոց, յիմս. |
| Հ. զիմ. | զիմս. |
| Բ. յիմմէ. | յիմոց. |
| Պ. զիմմէ. | զիմոց. |
| Գ. իմով. | իմովք. |
| Պ. զիմով. | զիմովք. |
| Ն. յիմում. | յիմս: |



*Այսպէս կհոլովին*, քոյ, ձեր. *Իսկ ի ստացանէ ածականները*—իմային, քոյային, իւրային, մերային, ձերային, սորային, դորային, նորային: *Ստացական դերանունքը կհոլովին յերրորդ հոլովման վերայ, ինչպէս.* ձերային, ձերայնոյ, ձերայնով, ձերայնոց, ձերայնովք:

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

### Ո՞Վ. կամ Ո՞.

| *Եզակի,* | *Յոգնակի.* |
|---|---|
| Ո. ո՞վ կամ ո՞. | ո՞յք. |
| Ս. ո՞յր. | ո՞յց. |
| Տ. ո՞ւմ, յո՞, առ. ո՞վ կամ ո՞. | ո՞յց, առ. ո՞յս. |
| Հ. զո՞վ կամ զո՞. | զոյս. |
| Բ. յումմէ. | յոյց. |
| Պ. զումմէ. | զոյց. |
| Գ. — | — |
| Պ. — | — |
| Ն. — | — |

### ՈՐ.

| | |
|---|---|
| Ո. ո՞ր. | ո՞րք. |
| Ս. որո՞յ. | որո՞ց. |
| Տ. որո՞ւմ, առ. ո՞ր. | որո՞ց, ընդ ո՞րս. |
| Հ. զո՞ր. | զո՞րս. |
| Բ. յորմէ. | յորո՞ց. |
| Պ. զորմէ. | զորո՞ց. |
| Գ. որո՞վ. | որո՞վք. |
| Պ. զորո՞վ. | զորո՞վք. |
| Ն. յորո՞ւմ. | յո՞րս: |

ԻՆՉ.

Ո. ինչ.
Ս. իր.
Տ. իմ.
Հ. զինչ.
Գ. իւ.
Պ. զիւ.
Ն. յինչ.

*Ծանօթութիւն Ա. Դերանուանքս* ով, ո, որ, ինչ, *կգործածուին նաեւ այսպէս,* ո՛ր եւ իցէ, ո՛ եւ իցէ, ո՛վ ոք եւ իցէ, յորոց եւ իցէ, ինչ եւ իցէ, զինչ եւ իցէ, իւ եւ իցէ:

*Բ. Յարաբերական* որ *դերանուան տեղ կ՚առնի նաեւ հարցական ո՞ն, բայց ո՛չ հարցական ձայնիւ, այլ յարաբերականի մտքով, ինչպէս.* ո, ոյր, ում *եւ այլն:*

*Գ. Իսկ հարցականքս՝* որպիսի, զինչպիսի, քանի, *նոյնպէս եւ անորոշ դերանուանքս՝* այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի *կհոլովին չորրորդ հոլովման վերայ, ինչպէս.* այդպիսի, այդպիսւոյ, այդպիսեաւ. այդպիսիք, այդպիսեաց, այդպիսեօք:

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ.

ՈՄՆ, ՈՔ, ԻՄՆ.

| | *Եզակի.* | | *Յոգնակի.* |
|---|---|---|---|
| Ո. | ոմն. | ոք. | ոմանք. |
| Ս. | ուրումն. | ուրուք. | ոմանց. |
| Տ | ումեմն. | ումեք. | ոմանց, յոմանս. |
| Հ. | զոմն. | զոք. | զոմանս. |
| Բ. | յումեմնէ. | յումեքէ. | յոմանց. |
| Պ. | զումեմնէ. | զումեքէ. | զոմանց. |
| Գ. | ոմամբ. | — | ոմամբք. |
| Պ. | զոմամբ. | — | զոմամբք. |
| Ն. | յումեմն. | յումեք. | յոմանս: |



*Հ. Ուրիշ մը մանիկները կ՚առնին* ոմն *անորոշ դերանուան տեղ.*

*Պ.* Ոմն *անորոշ դերանուան տեղ կ՚առնին նաեւ այսքիկ,* է որ, էր որ, են որ, *ինչպէս. է՛ որ պահէ — ոմն՝ պահէ, են՝ որ արտաքուսա — ոմանք արտաքուսա են:*

*Իմն կհոլովի այսպէս, ուղ.* իմն, *սեռ.* իրիք, *տրակ.* իմիք, առ իմն, *հայց.* զիմն, *բաց.* յիմեքէ, *պատմ.* զիմեքէ *գործ.* իւիք, *պարառ.* զիւիք, *ներ.* յիմիք *կամ* յիմն:

ԱՅԼ, ՄԻՒՍ.

| | *Եզակի.* | | *Յոգնակի.* |
|---|---|---|---|
| Ո. | այլ. | միւս. | այլք. |
| Ո. | այլոյ. | միւսոյ. | այլոց. |
| Տ. | այլում, ընդ այլ. | միւսում, ցմիւս. | այլոց, առ այլս. |
| Հ. | զայլ. | զմիւս. | զայլս. |
| Բ. | յայլմէ. | ի միւսմէ. | յայլոց. |
| Պ. | զայլմէ. | զմիւսմէ. | զայլոց. |
| Գ. | այլով. | միւսով. | այլովք. |
| Պ. | զայլով. | զմիւսով. | զայլովք. |
| Ն. | յայլում. | ի միւսում. | յայլս: |

*Այսպէս կհոլովին* իւրաքանչիւր, երկաքանչիւր. *իսկ* ամէն, ամենայն, համայն, բոլոր, ողջոյն, *կհոլովին առաջին հոլովման պէս:*

ԱՄԵՆԵՔԵԱՆ.

Ո. ամենեքեան կամ ամենեքին.
Ս. ամենեցունց կամ ամենեցուն.
Տ. ամենեցունց, առ ամենեսեան.
կամ առ ամենեսին.
Հ. զամենեսեան կամ զամենեսին.
Բ. յամենեցունց.
Պ. զամենեցունց.
Գ. ամենեքումբք.
Պ. զամենեքումբք.
Ն. յամենեսեան կամ յամենեսին:

*Այսպէս կհոլովին* բոլորեքեան կամ բոլորեքին. երկոքեան, երեքեան, չորեքեան, *եւ այլն:*

## ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ.

*Հ. Զի՞նչ ցուցանեն թուական անուանք.*

*Պ. Թուական անուանք ցուցանեն մարդկանց կամ որ եւ իցէ առարկայից թիւն ու կարգը։*

*Հ. Քանի՞ տեսակ են թիւք անուանց.*

*Պ. Երկու տեսակ.* բացարձակ եւ դասական։

*Հ. Ո՞րն է բացարձակ թուականը.*

*Պ. Բացարձակք են,* մի, երկու, երեք, տասն, քսան, քառասուն, *եւ այլն։*

*Հ. Ո՞րն է դասականը.*

*Պ. Դասականք են,* առաջին, երկրորդ, երրորդ *եւ այլն։*

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ԹՈՒԱԿԱՆ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆՈՒԱՆՑ.

### ՄԻ.

Ո. մի.
Ս. միոջ կամ միոյ.
Տ. միում, առ. մի.
Հ զմի.
Բ. ի միոջէ կամ ի միոյ.
Պ. զմիոջէ կամ զմիոյ.
Գ. միով.
Պ. զմիով.
Ն. ի միում։

*Այսպէս կհոլովուի* քսան մի, երեսուն մի, քառասուն մի *եւ այլն։*

Երկու՝ *կհոլովի* երկուք, երկուց *կամ* երկոքումբք։

Երեք, չորք *կամ* չորս, հինգ, վեց, եօթն, ութ, ինն, մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան, քսան, երեսուն, *կհոլովին առաջին հոլովման պէս։*



Հարիւր, երկերիւր, չորեքհարիւր, *մինչեւ* հազար՝ *կհոլովին երրորդ հոլովման պէս։*

Հազար՝ *կհոլովի երկրորդ հոլովման վերայ։*

Տասն *կհոլովի հինգերորդ հոլովման վերայ։*

Բիւր, *կհոլովի ութերորդ հոլովման պէս։*

---

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ԹՈՒԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ.

Առաջին, նախկին, *կհոլովին երրորդ հոլովման պէս,* առաջին — առաջնոյ — յառաջնէ — յառաջնով — յառաջնում։ նախկին — նախկնոյ — նախկնով — նախնի — նախնի — նախնոյ — նախնով — ի նախնում. *իսկ որդ, դակ, եակ, պատիկ, վերջաւորած թուական անուանքը, ինչպէս.* առաջներորդ, երկրորդ, երրորդ, տասներորդ, հարիւրերորդ, միակ, համակ, երկեակ, երրեակ, տասնեակ, երկպատիկ, եռապատիկ, քառապատիկ *կհոլովին առաջին կամ երկրորդ հոլովմանց պէս։*

*Ծանօթութիւն. Թուական բացարձակ եւ դասական անուանք ածական են։*

## ԲԱՅ.

Հ. Զի՞նչ է բայը.

Պ. Բայն է մասն բանի, որ կցուցնէ գործողութիւն կամ կրելութիւն:

Հ. Զի՞նչ պարտ է որոշել բային մէջ.

Պ. Բային մէջ պարտ է որոշել՝ տեսակ, դէմք, թիւ, ժամանակ, եղանակ, խոնարհմունք, եւ լծորդութիւն:

Հ. Քանի՞ տեսակ կբաժնուի բայը.

Պ. Հինգ տեսակ, որք են.

Ա. Էական՝ որ կյայտնէ էութիւնը կամ լինելութիւնը առարկային, եւ են չորս. եմ, գոմ, եղանիմ, լինիմ:

Բ. Ներգործական՝ որ զուրիշը կձգէ իւր գործողութեան տակ, ինչպէս. պաշտել, դարմանել, թողուլ եւ այլն:

Գ. Կրաւորական՝ որ ինքը կլինայ ուրիշին գործողութեան տակ եւ կվերջաւորի իլ, ինչպէս՝ բժշկիլ, ազատիլ, եւ այլն:

Դ. Չեզոքական՝ որ ցուցանէ գործողութիւն մը ինքն յիւր վերայ կատարուած, ինչպէս՝ երթալ, ննջել, զբօսնուլ, եւ այլն:

Ե. Հասարակ՝ որ մի եւ նոյն վերջաւորութեամբ՝ երբեմն ներգործական եւ երբեմն կրաւորական բայերու նշանակութիւն ունի, ինչպէս՝ ծնանիմ, համարիմ, տանիմ, դատիմ, եւ այլն:

Հ. Քանի՞ թիւ ունի բայը.

Պ. Բայն ալ անուան եւ դերանուան պէս երկու թիւ ունի, — եզակի՝ որ կյայտնէ մի գործողութիւն, ինչպէս՝ գրեմ, յոգնակի՝ որ կյայտնէ շատ գործողութիւն, ինչպէս՝ գրեմք:

Հ. Քանի՞ դէմք ունի բայը.

Պ. Բայն ունի երեք դէմք, —

առաջինը՝ գրեմ — գրեմք.
երկրորդը՝ գրես — գրէք.
երրորդը՝ գրէ — գրեն:



Հ. Քանի՞ տեսակ կբաժնուին բայերն ըստ դիմաց.

Պ. Երկու՝ դիմաւոր եւ դիմազուրկ:

Հ. Ո՞ր բայերը կըսուին դիմաւոր.

Պ. Դիմաւոր կըսուին այն բայերը որք յերեք դէմքի վերայ ալ կխոնարհին. ինչպէս՝ գործեմ, գործես, գործէ:

Հ. Ո՞յք են դիմազուրկ բայերը.

Պ. Այն բայերն են՝ որք երրորդ դէմքով միայն կըգործածուին, ինչպէս՝ օրէն է, անկ է, երեւի, լուսացի, դէպ եղեւ, եւ այլն:

Հ. Քանի՞ ժամանակ ունի բայը.

Պ. Հինգ ժամանակ, ներկայ, անկատար, կատարեալ, ապառնի պարզ եւ ապառնի բաղադրեալ:

Հ. Քանի՞ եղանակ ունի բայը.

Պ. Երեք եղանակ՝ սահմանական, հրամայական, եւ աներեւոյթ:

Սահմանականը ցուցանէ ներկայ, անկատար, կատարեալ, ապառնի պարզ եւ ապառնի բաղադրեալ ժամանակներու գործողութիւնքը, ինչպէս. գործեմ, գործէր, գործեաց, գործեցից, գործիցեմ:

Հրամայականը կհրամայէ կամ կ'արգիլէ, ինչպէս՝ արա՛, մի՛ հարկանէր, եւ այլն:

Աներեւոյթ եղանակը կյայտնէ գործողութիւն մը առանց ժամանակի, դէմքի եւ թուոյ, ինչպէս՝ բառնալ, խնդրել, թողուլ եւ այլն:

Հ. Զի՞նչ են խոնարհմունք բայից.

Պ. Բայից խոնարհմունքն են՝ բայերու ժամանակով, դէմքով եւ թուով փոփոխուիլը, ինչպէս՝ կարդամ, կարդացի, կարդացից, եւ այլն:

Հ. Քանի՞ տեսակ կբաժնուին բայերը ըստ խոնարհման.

Պ. Բայերն ըստ խոնարհման կբաժնուին երկու տեսակ, կանոնաւոր եւ անկանոն (զարտուղի):

Հ. Ո՞ր բայերը կըսուին կանոնաւոր.

Պ. Այն բայերը՝ որ կանոնաւոր կերպով կխոնարհին։

Հ. Ո՞ր բայերը կանուանին անկանոն.

Պ. Այն բայերը՝ որք կխոտորին կանոնաւոր խոնարհմունքէն։

Հ. Զի՞նչ է լծորդութիւն բայից.

Պ. Բայերու լծորդութիւնն է բայերու սահմանական ներկայի վերջաւորութեանց մէջ եղած այս չորս տարբերութիւնքը, ամ, եմ, իմ, ում, յորոց վերայ կըխոնարհին բոլոր բայերը Հայոց լեզուի։

---

## ԽՈՆԱՐՀՈՒՄՆ ԷԱԿԱՆ ԲԱՅԻՑ.

### ԵՄ.

Ներկայ.

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Եմ, ես, է, | եմք, էք, են. |

Անկատար.

| | |
|---|---|
| Էի, էիր, էր, | էաք, էիք, էին. |

Ապառնի բաղադրեալ.

| | |
|---|---|
| Իցեմ, իցես, իցէ, | իցեմք, իցէք, իցեն. |

Հրամայական.

| | |
|---|---|
| Ե՛ր, | երո՛ւք. |

Աններեւոյթ.

Ել։

Այս էական բայի հրամայականները շատ չեն գործածուիր, եւ միայն ողջ բառին հետ կգրուին այսպէս. Ողջ եր, ողջ երուք։

---



### ԳՈՄ.

Ներկայ.

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Գոմ, գոս, գոյ, | գոմք, գոյք, գոն. |

Անկատար.

| | |
|---|---|
| Գոյր, | գոյին. |

Ապառնի բաղադրեալ.

| | |
|---|---|
| Գուցէ. | գուցեն. |

Աններեւոյթ.

Գոլ։

Կայ նաեւ Իք բայը, որ կայ ըսել է, եւ գոմ բային երրորդ դէմքին տեղ դրուած է տեղ տեղ. բայց այժըմ մինակ չբանելուն համար չ մակբայով կգործածուի, ինչպէս՝ չիք, այսինքն չկայ, չէ. չիք հնար — ճար չկայ. չիք աստ — այստեղ չէ, եւ այլն։

### ԵՂԱՆԻՄ.

Ներկայ.

| Եզակի. | Յոգնակի. |
|---|---|
| Եղանիմ, եղանիս, եղանի. | եղանիմք, եղանիք, —նին. |

Անկատար.

| | |
|---|---|
| Եղանէի, եղանէիր, —նէր. | եղանէաք, եղանէիք, —ին. |

Կատարեալ.

| | |
|---|---|
| Եղէ, եղեր, եղեւ. | եղաք, եղէք, եղեն. |

Ապառնի պարզ.

| | |
|---|---|
| Եղեց, եղիցիս, եղիցի. | եղիցուք, եղիջիք, եղիցին. |

Ապառնի բաղադրեալ.

| | |
|---|---|
| Եղանիցիմ, — ցիս, — ցի. | եղանիցիմք, — ջիք, — ցին. |

Հրամայական.

| | |
|---|---|
| Մի՛ եղանիր. | եղերո՛ւք, մի՛ եղանիք. |

Աններեւոյթ.

Եղանել կամ եղանիլ։

ԼԻՆԻՄ.

Ներկայ.

Եզակի. Յոգնակի.

Լինիմ, լինիս, լինի. լինիմք, լինիք, լինին.

Անկատար.

Լինէի, լինէիր, լինէր. լինէաք, լինէիք, լինէին.

(Կատարեալն եղանիմէն կառնու.)

Ապառնի պարզ.

Լիցիմ, լիցիս, լիցի. լիցուք, լիջիք, լիցին.

Ապառնի անորոշ.

Լինիցիմ, լինիցիս, լինիցի. լինիցիմք, լինիցիք, լինիցին.

Հրամայական.

Լեր կամ լիջիր, մի լինիր կամ մի լինիջիր. լերո՛ւք, մի լինիք կամ մի լիջիք.

Աներեւոյթ.

Լինիլ կամ լինել:

Հ. Բանի խոնարհմունք ունի ամ լծորդութիւնը.

Պ. Ամ լծորդութիւնը ունի երկու խոնարհմունք, մէկը բանամին վրայ եւ միւսը մոռանամին, որ բոլոր ամ վերջաւորած կանոնաւոր բայերը այս երկուքին պէս կխոնարհին:

---

## Ա. ՕՐԻՆԱԿ ԱՄ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

ԲԱՆԱՄ.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ.

Ներկայ.

Եզակի. Յոգնակի.

Բանամ, բանաս, բանայ. բանամք, բանաք, բանան.
Կբանամ, կբանաս, —նայ. կբանամք, կբանաք, —նան.



Անկատար.

Բանայի, —յիր, —նայր. բանայաք, բանայիք, —յին:
Կբանայի . . . . . . կբանայինք . . . . . . .

Կատարեալ.

Բացի, բացեր, եբաց կամ բաց. բացաք, բացիք, բացին.
Բացայ, բացար, բացաւ. բացինք, բացիք, բացին.

Ապառնի պարզ.

Բացից, բացցես, բացցէ. բացցուք, բացջիք, —ցեն.
Պիտի բանամ . . . . պիտի բանամք . . . . .

Ապառնի բաղադրեալ.

Բանայցեմ, —ցես, —ցէ. բանայցեմք, —ցէք, —ցեն.
Եթէ բանամ . . . . եթէ բանամք . . . . .

Հրամայական.

Բա՛ց, մի բանար. բացէ՛ք, մի բանայք:

Աներեւոյթ.

Բանալ:

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.

Ներկայ.

Եզակի. Յոգնակի.

Բանիմ, բանիս, բանի. բանիմք, բանիք, բանին.

Անկատար.

Բանայի, բանայիր, —նայր. բանայաք, —յիք, —յին.

Կատարեալ.

Բացայ, բացար, բացաւ. բացաք, բացայք, բացան.

Ապառնի պարզ.

Բացայց, բացցիս, բացցի. բացցուք, բացջիք, —ցին.

Ապառնի բաղադրեալ.

Բանայցիմ, —ցիս, —ցի. բանայցիմք, —ցիք, —ցին.

Հրամայական.

Բացի՛ր. բացի՛ք կամ բացարո՛ւք.

Աներեւոյթ.

Բանիլ:

Այսպէս կխոնարհին, աղամ, լուանամ, թանամ, լամ, կարդամ, խոկամ, հաւատամ, գնամ, մնամ, լողամ եւ այլն:

## Բ ՕՐԻՆԱԿ ԱՄ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

ՄՈՌԱՆԱՄ.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ.

*Ներկայ.*

*Եզակի.* *Յոգնակի.*

***Մոռանամ, —նաս, —նայ. մոռանամք, —նայք, —նան.***

*Անկատար.*

***Մոռանայի, —յիր, —նայր. մոռանայաք, —յիք —յին.***

*Կատարեալ.*

***Մոռացայ, մոռացար—ցաւ. մոռացաք, —ցայք —ցան.***

*Ապառնի պարզ.*

***Մոռացայց, —ցիս, —ցի. մոռասցուք, —ջիք —ցին.***

*Ապառնի բաղադրեալ.*

***Մոռանայցեմ, —ցես, —ցէ. մոռանայցեմք, —ցէք—ցեն.***

*Հրամայական.*

***Մոռացի՛ր կամ մոռա՛, մոռացարուք, մի մոռա-***
***մի մոռանար. նայք.***

*Աներևոյթ.*

***Մոռանալ:***

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.

*Ներկայ.*

***Մոռանիմ, —նիս, —նի. մոռանիմք, —նիք, —նին:***

(*Անկատար, Կատարեալ եւ Ապառնի պարզ* ներգործականին պէս են):

*Ապառնի բաղադրեալ.*

***Մոռանայցիմ, —ցիս, —ցի. մոռանայցիմք, —իք, —ին.***

*Հրամայական.*

***Մոռացի՛ր, մի մոռանիր. մոռացարուք, մի մոռանիք.***

*Աներևոյթ.*

***Մոռանիլ:***

***Այսպէս կխոնարհին՝*** զլանամ, իմանամ, հոգամ, խոստանամ, մերկանամ, դողամ, փութամ, ջանամ, ընթանամ, գոհանամ, ***եւ այլն:***

***Ծանօթութիւն Ա. Ամեն ներգործական բայ իւր կրաւորականը ունի:***



***Բ. Կրաւորական պակասաւոր բայերը կգործածուին եղանիմ եւ լինիմ էական բայերով, ինչպէս՝*** աղացեալ լինիմ, աղացեալ լինիս, աղացեալ լինի, մերկացեալ եղէ, մերկացեալ եղեր, մերկացեալ եղեւ, ***եւ այլն:***

---

***Հ. Քանի խոնարհմունք ունի եմ լծորդութիւնը.***

***Պ. Եմ լծորդութիւնը ունի երեք խոնարհմունք, այս երեք բայերուն վրայ*** առաքեմ, գտանեմ ***եւ*** ասեմ:

## Ա. ՕՐԻՆԱԿ ԵՄ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

ԱՌԱՔԵՄ.

*Ներկայ.*

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

***Առաքեմ, առաքես, առաքէ. առաքիմ, առաքիս, —ի.***
***Առաքեմք, առաքէք, —են. առաքիմք, առաքիք, —ին.***

*Անկատար.*

***Առաքէի, առաքէիր, —էր.*** } Ներգործականին պէս.
***Առաքէաք, առաքէիք, —էին.***

*Կատարեալ.*

***Առաքեցի, —ցեր, —եաց. առաքեցայ, —ցար, —ցաւ.***
***Առաքեցաք, —ցիք, —ցին. առաքեցաք, —ցայք, —ցան.***

*Ապառնի պարզ.*

***Առաքեցից, առաքեսցես, առաքեցայց, առաքեսցիս,***
***առաքեսցէ. առաքեսցի.***
***Առաքեսցուք, —ջիք, —ցեն. առաքեսցուք, —ջիք, —ցին.***

*Ապառնի բաղադրեալ.*

***Առաքիցեմ, —ցես, —ցէ. առաքիցիմ, —ցիս, —ցի.***
***Առաքիցեմք, —ցէք, —ցեն. առաքիցիմք, —ցիք, —ցին.***

*Հրամայական.*

***Առաքեա՛, մի առաքեր. առաքեա՛ց, մի առաքիր.***
***Առաքեցէ՛ք, մի առաքէք. առաքեցարո՛ւք մի առաքէք.***

Աներեւոյթ.

*Առաքել.* *Առաքիլ:*

*Այսպէս կխոնարհին՝* գրեմ, կարեմ (*կար կարել*), ուռնեմ, խնդրեմ, յորդորեմ, ներկեմ, ամաչեմ, տիրեմ, դիմեմ, աղաղակեմ. հրաժարիմ, աշխատիմ, վարձիմ, *եւ այլն*:

---

## Բ ՕՐԻՆԱԿ ԵՄ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

### ԳՏԱՆԵՄ.

Ներկայ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ. ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.

*Գտանեմ, գտանես, — է. գտանիմ, գտանիս, գտանի.*
*Գտանեմք, գտանէք, —են. գտանիմք, գտանիք, —ին.*

Անկատար.

*Գտանէի, — էիր, — էր.*
*Գտանէաք, — էիք — էին.* } Ներգործականին պէս է.

Կատարեալ.

*Գտի, գտեր, գիտ կամ եգիտ. գտայ, գտար, գտաւ.*
*Գտաք, գտէք, գտին. գտաք, գտայք, գտան.*

Ապառնի պարզ.

*Գտից, գտցես, գտցէ. գտայց, գտցիս, գտցի.*
*Գտցուք, գտջիք, գտցեն. գտցուք, գտջիք՝ գտցին.*

Ապառնի բաղադրեալ.

*Գտանիցեմ, — ցես, — ցէ. գտանիցիմ, — ցիս, — ցի.*
*Գտանիցեմք, —ցէք, —ցեն. գտանիցիմք, — ցիք, —ցին.*

Հրամայական.

*Գիտ, մի գտաներ. գտիր, մի գտանիր.*
*Գտէք, մի գտանէք. գտարուք, մի գտանիք:*

Աներեւոյթ.

*Գտանել.* *Գտանիլ:*

*Այսպէս կխոնարհին՝* հատանեմ. հանեմ, ածեմ, ցուցանեմ, իջանեմ, ելանեմ, անցանեմ, զիջանեմ, մտանեմ. ծնանիմ, ծնայ. ուսանիմ, ուսայ. ագանիմ, ագայ. բուսանիմ, բուսայ: — *Նոյնպէս եւ չիմ վերջաւորուած բայերը. զոր օրինակ,* թռչիմ, թռեայ. փախչիմ, փախեայ. մատչիմ, մատեայ. կորնչիմ, կորեայ, *եւ այլն*:



---

## Գ ՕՐԻՆԱԿ ԵՄ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

### ԱՍԵՄ.

Ներկայ.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ. ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.

*Ասեմ, ասես, ասէ. ասիմ, ասիս, ասի.*
*Ասեմք, ասէք, ասեն. ասիմք, ասիք, ասին.*

Անկատար.

*Ասէի, ասէիր, ասէր.*
*Ասէաք, ասէիք, ասէին:* } Ներգործականին պէս.

Կատարեալ.

*Ասացի, ասացեր, ասաց. ասացայ, ասացար, — ցաւ.*
*Ասացաք, ասացիք, — ցին. ասացաք, ասացայք, — ցան.*

Ապառնի պարզ.

*Ասացից, ասասցես, — ցէ. ասասցայց, ասասցիս, — ցի.*
*Ասասցուք, — ջիք, — ցեն. ասասցուք, — ջիք, — ցին.*

Ապառնի բաղադրեալ.

*Ասիցեմ, ասիցես, ասիցէ. ասիցիմ, ասիցիս, ասիցի.*
*Ասիցեմք, ասիցէք, — ցեն. ասիցիմք, ասիցիք, — ցին.*

Հրամայական.

*Ասա՛, մի ասեր. Ասիջիր, մի ասիցիս.*
*ասացէք, մի ասէք. ասիցո՛ւք, մի ասիցիք.*

Աներեւոյթ.

*Ասել.* *Ասիլ:*

*Այսպէս կխոնարհին՝* գիտեմ, մերկեմ, կարեմ, (*կարենալ*), *Նոյնպէս եւ բոլոր ուցանեմ եւ ուսանեմ վերջաւորուած բայերը, ինչպէս՝* ամրացուցանեմ, ամրացուցի, ամրացո՛, մի ամրացուցաներ. մասուցանեմ, զօրացուցանեմ, զարհուրեցուցանեմ, ամաչեցուցանեմ, զարթուցանեմ, ապրեցուցանեմ, կորուսանեմ, *եւ այլն*:

*Հ. Քանի խոնարհմունք ունի ում լծորդութիւնը.*

*Պ. Ում լծորդութիւնն ունի երկու խոնարհմունք, երկու բայերուն վրայ՝* թողում *եւ* ընթեռնում։

## Ա. ՕՐԻՆԱԿ *ՈՒՄ* ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

### ԹՈՂՈՒՄ.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ.

*Ներկայ.*

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| *Թողում, թողուս, թողու.* | *թողումք, թողուք, — ուն.* |
| *Անկատար.* | |
| *Թողուի, թողուիր, — ույր.* | *թողուաք, թողուիք, — ին.* |
| *Կատարեալ.* | |
| *Թողի, թողեր, թող կամ եթող.* | *թողաք, թողիք, թողին.* |
| *Ապառնի պարզ.* | |
| *Թողից, թողցես, թողցէ.* | *թողցուք, թողջիք, — ցեն.* |
| *Ապառնի բաղադրեալ.* | |
| *Թողուցում, — ցուս, — ցու.* | *թողուցումք, — ցուք — ցուն.* |
| *Հրամայական.* | |
| *Թո՛ղ, մի՛ թողուր.* | *թողէք, մի՛ թողուք.* |

*Աներեւոյթ.*

*Թողուլ։*

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ.

*Ներկայ.*

| | |
|---|---|
| *Թողանիմ, թողանիս, — ի.* | *թողանիմք, թողանիք — ին.* |
| *Անկատար.* Ներգործականին պէս. | |
| *Կատարեալ.* | |
| *Թողայ, թողար, թողաւ.* | *թողաք, թողայք, թողան.* |
| *Ապառնի պարզ.* | |
| *Թողայց, թողցիս, թողցի.* | *թողցուք, թողջիք, — ցին.* |
| *Ապառնի բաղադրեալ.* | |
| *Թողանիցիմ, — ցիս, — ցի.* | *թողանիցիմք, — ցիք, — ցին.* |



*Հրամայական.*

*Թողի՛ր, մի՛ թողանիր. թողջիք, մի՛ թողանիք.*

*Աներեւոյթ.*

*Թողանիլ։*

*Այսպէս կխոնարհին՝* հեղում, առնում, առաւելում, զենում, դիզում, կասում, լնում, լցի. խնում, խցի. ընկենում, ընկեցի *եւ այլն։*

## Բ ՕՐԻՆԱԿ *ՈՒՄ* ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ.

### ԸՆԹԵՌՆՈՒՄ.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ.

*Ներկայ.*

| *Եզակի.* | *Յոգնակի.* |
|---|---|
| *Ընթեռնում, — ուս, — նու.* | *ընթեռնումք, — ուք, — ուն.* |
| *Անկատար.* | |
| *Ընթեռնուի, — իր, — ույր.* | *ընթեռնուաք, — իք, — ին.* |
| *Կատարեալ.* | |
| *Ընթերցայ, — ցար — ցաւ.* | *ընթերցաք, — ցայք, — ցան.* |
| *Ապառնի պարզ.* | |
| *Ընթերցայց, — ցցիս — ցցի.* | *ընթերցցուք — ցջիք — ցցին.* |
| *Ապառնի բաղադրեալ.* | |
| *Ընթեռնուցում, ընթեռնուցուս, ընթեռնուցու.* | *ընթեռնուցումք, ընթեռնուցուք, ընթեռնուցուն.* |
| *Հրամայական.* | |
| *Ընթերցի՛ր մի՛ ընթեռնուր.* | *ընթերցարո՛ւք մի՛ ընթեռնուք.* |

*Աներեւոյթ.*

*Ընթեռնուլ։*

*Սորա կրաւորականը կձեւանայ էական բայիւ կամ* թողանիմին *պէս։*

*Այսպէս կխոնարհին՝* զգենում, յենում, զբօսնում, հեղձնում, ջեռնում, զարթնում — թեայ, ցասնում — սեայ, փաղցնում — ցեայ, փաղցիր, երդնում — երդուայ, երդուիր, *եւ այլն։*

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅՔ. (արտուղի).

Հ. Ո՞յք են անկանոն բայք.

Պ. Այսոքիկ. բառնամ, գամ, դառնամ, երթամ, տամ, առնեմ, դնեմ, ըմպեմ, լսեմ, ճանաչեմ, մեղանչեմ, յառնեմ, ուտեմ, ունիմ, եւ այլն։

## ԽՈՆԱՐՀՈՒՄՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՑ.

Բառնամ—բարձի—բառնայցեմ—բա՛րձ, մի՛ բառնար. բարձէ՛ք, մի՛ բառնաք։

Բառնիմ—բարձայ—բառնայցիմ—բարձի՛ր, բարձարուք կամ բարձի՛ք։

Այսպէս կխոնարհին համբառնամ, դառնամ, գամ—եկի—գայցեմ—եկ, —մի՛ գար, եկա՛յք—մի՛ գայք։

Երթամ—չոգայ—երթայց—երթ, մի՛ երթար. երթա՛յք, մի՛ երթայք։

Տամ—ետու—տուաք—ետու՛ք—տաց—տայցեմ—տո՛ւր, մի՛ տար. տո՛ւք, մի՛ տաք։ Սորա կրաւորականը պակասաւոր է. իսկ կատարեալը՝ տուայ—տուաք.

Ապառնի պարզ՝ տացցես—տացցէ.

— բաղադրեալ՝ տայցիս—տայցի։

Առնեմ—արարի—առնիցեմ—արա՛, մի՛ առներ. արարէ՛ք, մի՛ առնէք։

Առնիմ—արարայ—առնիցիմ—մի՛ առնիր, մի՛ առնիք։

Դնեմ—եդայ—դնիցիմ—մի՛ դնիր, մի՛ դնէք։

Ըմպեմ—արբի—ըմպիցեմ—ա՛րբ, մի՛ ըմպեր, արբէ՛ք մի՛ ըմպէք։

Լսեմ—լուայ—լսիցեմ—լո՛ւր, մի՛ լսեր. լուարո՛ւք, մի՛ լսէք։

Լսիմ—լսելի եղէ—լուիցիմ—լսիցիմ—լսելի լեր։

Ճանաչեմ—ծանեայ—ծանիցեմ—կամ ճանաչիցեմ—ծանի՛ր, մի՛ ճանաչեր. ծաներո՛ւք, մի՛ ճանաչէք։



Ճանաչիմ—ծանուցայ—ծանիցիմ կամ ճանաչիցիմ։

Մեղանչեմ—մեղայ—մեղիցեմ կամ մեղանչիցեմ—մեղի՛ր կամ մեղանչեա՛, մի՛ մեղանչեր. մի՛ մեղանչէք։

Յառնեմ—յարեայ—յարիցեմ կամ յառնիցեմ—ա՛րի, մի՛ յառներ. արի՛ք, մի՛ յառնէք։

Ուտեմ—կերայ կամ կերի—ուտիցեմ—կե՛ր, մի՛ ուտեր. կերէ՛ք կամ կերա՛յք, մի՛ ուտէք։

Ունիմ—կալայ—ունիցիմ—կա՛լ, մի՛ ունէր. կալարո՛ւք մի՛ ունէք։

Այսպէս կխոնարհին՝ ակնունիմ, ընդունիմ, եւ այլն։

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Հ. Զի՞նչ է ընդունելութիւնը.

Պ. Ընդունելութիւնն է մասն բանի, որ ցուցանէ միով ձայնիւ գործողութիւն մը անունէ ու բայէ կազմուած, ինչպէս՝ գրող, նա՝ որ կգրէ. գրեալ, այն՝ որ գրուած է. գրելի կամ գրելոց, այն՝ որ պիտի գրուի։

Հ. Քանի՞ տեսակ վերջաւորութիւն ունի ընդունելութիւնը.

Պ. Երեք տեսակ վերջաւորութիւն, այսինքն ող, եալ, լի կամ լոց։

Հ. Քանի՞ պարագայ ունի ընդունելութիւնը.

Պ. Չորս պարագայ ժամանակ, թիւ, հոլով եւ հոլովումն։

Հ. Ընդունելութիւնը քանի՞ ժամանակ ունի.

Պ. Երեք ժամանակ երեք տեսակ վերջաւորութեանց համար, որք են. Ներկայ՝ գրող,

Կատարեալ՝ գրեալ կամ գրեցեալ,

Ապառնի՝ գրելի կամ գրելոց։

Հ. Քանի՞ թիւ եւ քանի՞ հոլով ունի ընդունելութիւնը.

Պ. Երկու թիւ եւ տասն հոլով։

Հ. Ընդունելութեան երեք ժամանակները ո՞ր հոլովմանց պէս կհոլովին.

Պ. Ընդունելութեան ներկայ ժամանակը որ կվերջաւորի ող՝ կհոլովի երկրորդ հոլովման պէս, զոր օրինակ գործող — ղի — ղաւ — ղաց — գործողօք :

Անցեալ ժամանակը որ կվերջաւորուի եալ՝ կհոլովի երրորդ հոլովման պէս, ինչպէս՝ գործեալ — լոյ — ելով :

Ապառնի ժամանակը որ կվերջաւորուի լի՝ կհոլովի չորրորդ հոլովման վերայ, ինչպէս՝ գրելի — լոյ — եաւ:

Ծանօթութիւն. Իսկ ընդունելութեան ապառնի ժամանակի միւս վերջաւորութիւնքը որ է լոց, կգործածուի էական բայիւ, ինչպէս՝ գրելոց եմ, գրելոց է. կամ նախդրիւ կհոլովի, ինչպէս՝ ի գրելոց, զգրելոց, զգալոցն։

Հ. Ի՞նչ գիտելիք կան ընդունելութեան լի վերջաւորութեան վերայ.

Պ. Լի վերջաւորութիւնը ընդունելութեան, ընտիր գրուածոց մէջ կբանի նաեւ ող-ի տեղ. ինչպէս՝ սիրելի — սիրող — սիրելեաց — սիրողաց, ատելի — ատող — ատելեաց — ատողաց :

Ծանօթութիւն. Ընդունելութեան ող, եալ, լի, վերջաւորութիւնքը ածական են։



# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ.

Հ. Զի՞նչ է նախադրութիւնը.

Պ. Նախադրութիւնն է անհոլովելի մասն բանի որ դրուելով հոլովելի բառից վրայ զանազան նշանակութիւնք կտայ անոնց։

Հ. Քանի՞ տեսակ կբաժնուի նախադրութիւնը.

Պ. Նախադրութիւնը կբաժնուի երկու տեսակ հոլովակերպ նախդիրք եւ հոլովառու նախդիրք :

Հ. Ո՞յք են հոլովակերպ նախդիրք.

Պ. Հոլովակերպ կըսուին այն նախդիրները, որ զանազան հոլովներ կկազմեն եւ են այսոքիկ.

ի, յ, ի յ, զ, առ, առ ի, ընդ:

Հ. Ո՞յք են հոլովառու նախադրութիւնք.

Պ. Հոլովառու նախադրութիւնք այսոքիկ են.

Վասն, սակս, յաղագս, աղագաւ, ի պատճառս, ի պէտս, ի տեղի, ի տեղւոջ, փոխանակ, փոխան, փոխարէն, զօրէն, հանգոյն, բաց, առանց, յերի, առ երի, առընթեր, զկնի, զհետ, յետ, ի յետուստ, յետ կոյս, առաջի, յառաջոյ, ընդ առաջ, ներքոյ, ի ներքոյ, արտաքոյ, ի վեր, ի վերոյ, ի վերայ, ի մէջ, ի միջի, ի միջոյ, ի ձեռն, ընդ ձեռն, ի կարգի, ի սակի, ի մասին, ի կուսէ, հանդէպ, յայնկոյս, դէմ յանդիման, եւ այլն, որք կպահանջեն սեռական հոլով, ինչպէս. Վասն սիրոյ։ Ի պէտս ձեր։ Առաջի աչաց, եւ այլն։

Մեկուսի, հեռի, ի բաց, գաղտ — բացառական հոլով, ինչպէս. Գաղտ ի մօրէն երթայր յեկեղեցին:

Գեր քան, արտաքոյ քան, անդր քան, նախ քան — հայցական հոլով, ինչպէս. Անդր քան զայս անցանել ոչ ունի։

Հանդերձ — գործիական հոլով, ինչպէս. Հանդերձ մարքն։ Ոտիւքն հանդերձ։

Շուրջ, շուրջանակի — պարառական հոլով, ինչպէս. Շուրջ զխաղախաւն։

Ընդ, ըստ, առ ի, առ, մինչ, մինչեւ, իբրեւ, իբր, իբրու, որպէս — զանազան հոլով ըստ պահանջման տեղւոյն։

## ՄԱԿԲԱՅ.

*Հ. Զի՞նչ է մակբայը.*

*Պ. Մակբայն է անհոլովելի մասն բանի որ կդրուի բային սկզբէն կամ վերջէն, անոնց հանգամանքը պարզապէս որոշելու համար, եւ են.*

*Անձնական.* — ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն, ինքնին:

*Ցուցական.* — ահա, ահաւադիկ, ահաւանիկ, *եւ այլն*:

*Հարցական.* — ո՞ւր, ուստի՞, ի՞ւ, իւիք, ո՞չ ապաքէն, զիա՞րդ, ե՞ր, վասն, զմէ՞, մի՞թէ, *եւ այլն*:

*Ժամանակական.* — այսօր կամ ի սերկեանս, յեռանդն, զարդիս, մինչեւ, մերթ, փութապէս, հուսկ յետոյ, վաղ ուրեմն, յաւիտեան, *եւ այլն*:

*Տեղական.* — աստ, աստէն, աստանօր, անդ, ուրեք, այլուր, ի ստորեւ, ուրանօր, ի մօտոյ, ի վերուստ, ի ներքուստ, *եւ այլն*:

*Որակական.* — այսպէս, նոյնպէս, բարւոք, խստիւ, լռելեայն, ի նանիր, այլ ընդ այլոյ, կենդանւոյն, մարդկօրէն, բերանացի, խոտորնակի, ձեռամբացի, *եւ այլն*:

*Քանակական.* — այսչափ, նոյնչափ, եւ ո՛չ այսչափ, միայն, սակաւ մի, դոյզն ինչ, եւս քան զեւս, *եւ այլն*:

*Թուական.* — մի անգամ, երկիցս, երիցս, դարձեալ, վերստին, կրկին, *եւ այլն*:

*Բացասական.* — ո՛չ, ո՛չ բնաւ, ո՛չ երբէք, ամենեւին ո՛չ *եւ այլն*:

*Հաստատողական.* — այո՛, յիրաւի, արդարեւ, ամէն, անտարակոյս, իսկապէս, հաւաստեաւ, *եւ այլն*:

*Երկբայական.* — գուցէ, գուցէ թէ, իցէ թէ, թերեւս, մի՛ արդեօք, գրեթէ, գոգցես, *եւ այլն*:

*Հ. Մակբայն ինչպէս կդրուի բային սկիզբը կամ վերջը.*

| | |
|---|---|
| *Պ. Այսպէս. Ուստի՞ գաս,* | *ուսկի՞ց կուգաս.* |
| *Երթիցուք աստի,* | *երթանք այս տեղէն.* |
| *Այսպէս ասէ,* | *այսպէս կըսէ.* |
| *Թերեւս արասցէ,* | *կարելի է որ ընէ.* |
| *Ել այտի,* | *ելիր անկից, եւ այլն:* |



## ՇԱՂԿԱՊ.

*Հ. Զի՞նչ է շաղկապը.*

*Պ. Շաղկապն է անհոլովելի մասն բանի, որ կկապէ բառ բառի կամ բան բանի հետ, եւ կըսուին.*

*Բաղհիւսական* — եւ, նաեւ, այլ, այլ եւս, եւ եւս, *եւ այլն*:

*Ներհակական* — քան թէ, միայն թէ, բայց, բայց սակայն:

*Բաժանական* — կամ, եւ կամ, կամ թէ:

*Մեկնական* — այսինքն, այս է, այն է, զոր օրինակ, օրինակ իմն, օրինակի աղագաւ, *եւ այլն*:

*Սկզբնաւորական* — եւ արդ, իսկ արդ, այլ արդ, իսկ ապաքէն, *եւ այլն*:

*Մակաբերական* — ուրեմն, ապա ուրեմն, ուստի, յաղագս որոյ, սակս որոյ, սմին իրի, դմին իրի, նմին իրի, *եւ այլն*:

*Պատճառական* — զի, վասն զի, քանզի, փոխանակ զի, որովհետեւ, *եւ այլն*:

*Վարանական* — զէ՞ր, զմնեայ:

*Թէական.* — եթէ, թէ, զի եթէ, իսկ եթէ, ապա թէ ոչ:

*Առաւելական* — մանաւանդ, առաւել եւս, յաւէտ եւս, մինչ զի, անգամ, *եւ այլն*:

*Անկատարական* — թէպէտ եւ, թէ եւ, թէ եւ ոչ, *եւ այլն*:

*Հ. Շաղկապով ինչպէս կկապուի բառ բառի կամ խօսք խօսքի հետ.*

| | |
|---|---|
| *Պ. Այսպէս. Ես եւ դու.* | *Ես ու դուն:* |
| *Ես եւս.* | *Ես ալ:* |
| *Ետես եթէ հաճոյ է.* | *Տեսաւ որ ախորժելի է:* |
| *Արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է.* | *Այժմ հոտած պիտի լինի, վասն զի չորս օրուան է:* |
| *Թէպէտ եւ կամէր, բայց ոչ կարաց.* | *Թէ եւ կուզէր, բայց չըկարողացաւ:* |

# ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ.

*Հ. Զի՞նչ է ձայնարկութիւնը.*

*Պ. Ձայնարկութիւնն է անհոլովելի մասն բանի, որ մարդկային հոգւոյ կիրքն ու զգացմունքը կյայտնէ, եւ կըսուին.*

*Ըղձական*—երանի՛ թէ, իցէ՛ թէ *կամ* իցի՛ւ թէ, *եւ այլն:*

*Խնդական*—վա՜շ, վա՜շ, վա՜շ, *եւ այլն:*

*Զարմացական*—ո՛, ո՛վ թէ, բա՛բէ, ո՛հ ո՛հ, *եւ այլն:*

*Յորդորական*—հապա՛, ծօ, ա՛ղէ, բէ՛ր, հա՛, *եւ այլն:*

*Աղաղական*—եղո՛ւկ, աղէ՛տ, վա՛յ, ո՛հ, ափսո՛ս, *եւ այլն:*

*Ծաղրական*—վա՛հ, վա՛շ, *եւ այլն:*

*Հ. Ձայնարկութեամբ զգացմունք յայտնելուն օրինակը ո՞րն է.*

| | |
|---|---|
| *Պ. Այս. Բա՛բէ կուրութեան մտացն.* | *Վա՛յ մտքին կուրութեանը:* |
| *Ո՛վ սքանչելեացս.* | *Ո՛ւհ, հիանալու բան:* |
| *Օ՛ն արիք.* | *Հա՛յտէ ելէք:* |
| *Ո՛հ, ես մեղայ.* | *Վա՛խ, ես մեղանչեցի:* |
| *Վա՛հ, որ քակէ իր զտաճարն.* | *Վա՛խ, որ տաճարը կըքակէիր:* |
| *Հա՛պա առաքինիք.* | *Հա՛յտէ կտրիճներ:* |
| *Վա՛շ քաջիդ.* | *Աֆէրիմ կտրիճիդ:* |
| *Վա՛շ վաշ, զի բեկաւ.* | *Օ՛խ օխ, որ կոտրեցաւ:* |
| *Օ՛շ թէ.* | *Երանի թէ:* |



# ՕՐԻՆԱԿ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

## ԸՍՏ ԱՌԱՋՆՈՅ ՄԱՍԻՆ.

Եթէ ոք անցուցանէր զամենայն կեանս իւր անվտանգ, ապաքէն ոչ կարէր զգալ զերջանկութիւն իւր:

Եթէ — *շաղկապ թէական.*

Ոք — *դերանուն անորոշ, եզակի թիւ, ուղ. հոլով.*

Անցուցանէր — *բայ ներգործական, եզակի երրորդ դէմք, ժամանակ անկատար.*

Զամենայն — *դերանուն անորոշ.*

Կեանս — (*զկեանս*) *գոյական անուն, չեզոքական, հայցական հոլով.*

Իւր — *դերանուն ստացական.*

Անվտանգ — *մակբայ որակական.*

Ապաքէն — *շաղկապ սկզբնաւորական.*

Ո՛չ — *մակբայ բացասական.*

Կարէր — *բայ չեզոքական, եզակի երրորդ դէմք, ժամանակ անկատար.*

Զգալ — *բայ ներգործական, աներեւոյթ եղանակ.*

Զերջանկութիւն — *գոյական անուն, չեզոքական, եզակի թիւ, հայցական հոլով.*

Իւր — *դերանուն ստացական:*

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ.

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ.

---

Հ. Զինչ է համաձայնութիւնը.

Պ. Համաձայնութիւնն է ութ մասանց բանի կանոնաւոր կերպով համաձայնելը միմեանց հետ:

Հ. Զինչ պարտ է նկատել նախապէս համաձայնութեան մէջ.

Պ. Համաձայնութեան մէջ պարտ է նկատել (տէր բայի) ենթակայն, խնդիրը, բացայայտիչն ու յատկացուցիչը:

Հ. Զինչ է ենթակայն.

Պ. Գործողութեան կամ բային տէրը կըսուի ենթակայ, զոր օրինակ՝ Ես գործեմ: Արեգակն է լուսաւոր: Բացեալ երկնից եւ իջեալ հոգւոյն սրբոյ (բացան երկինք եւ էջ հոգին սուրբ): Պարտ է ինձ ի քէն մկրտիլ: Եւ իմ եդեալ է ի մտի:

Հ. Ո՞րն է խնդիրը.

Պ. Ամեն հոլովեալ բառ մէկմէկ խնդիր են, ինչպէս՝ տան, ի տուն, զտան, ի տանէ, տամբ, եւ այլն:

Հ. Զինչ է բացայայտիչը.

Պ. Բացայայտիչն է այն բառը, որ մէկու մը կամ մէկ բանի ով կամ զինչ լինելը կբացայայտէ, եւ այն՝ որ կբացայայտուի՝ կըսուի բացայայտելի, զոր օրինակ.



Զքոյր իւր զՈրմզդուխտ:

Զփրկական սաղաւարտ ի գլուխ եդեալ զնշան խաչին՝

Երէց մի Պետրոս անուն:

Վասն զի այդ իսկ է կամք քո՝ խաղաղական եւ հոգեւոր սիրով կալ մեզ առ միմեանս:

Կանոն. Բացայայտիչն ու բացայայտելին կհամաձայնին միմեանց հետ թուով եւ հոլովիւ եւ նախդիրը երկուքին վրայ եւս կդրուի, զոր օրինակ.

Զիարդ կարելի է ոչ ունելով զտաճարն Աստուծոյ, զխաղաղութիւն առեմ, զերգ տեառն երգել:

Հայեցաւ ի նորն Աբէլ, ի միածինն իւր որդի:

Բացառութիւն. Սակաւ ուրեք եւս բացայայտիչը չէ համաձայնիր հոլովիւ իւր բացայայտելույն հետ, ինչպէս.

Խնդութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ (փոխանակ ասելոյ յԱրտաշատէ):

Մովսիսական օրէնքն ի Սինայ լեռնէն տուաւ (փոխանակ ասելոյ ի Սինայէ):

Հ. Զինչ է յատկացուցիչը.

Պ. Յատկացուցիչն է այն բառը, որ ուրիշ առարկայ մը իրենն կյատկացընէ, եւ այն առարկայն, որ կյատկանայ, կըսուի յատկացեալ, ինչպէս.

Զօրութիւն սուրբ խաչի:

Ալիք ծովու:

Ժամանակ խօսելոյ եւ ժամանակ լռելոյ:

Հ. Յատկացուցիչը ո՞ր հոլովիւ կդրուի.

Պ. Յատկացուցիչը կդրուի առ հասարակ սեռական հոլովիւ, բայց երբեմն գործիական հոլովիւ եւս, եւ այն՝ սեռականի նշանակութեամբ, ինչպէս.

Բազում բանիւք ողորմանօք, այսինքն ողորմանաց:

Ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւ քո, այսինքն խաչի քո:

Կանոն Ա. Նախդիրը կդրուի միայն յատկացելոյն վրայ, թէ յառաջադաս լինի նա՝ եւ թէ յետադաս, օրինակի համար.

Բաց մեզ զդուռն ողորմութեան:

Ծառայի առեր զկերպարան:

Բ. Եթէ յատկացուցչին եւ յատկացելոյն մէջ ուրիշ բառ ընկնի, այն ատեն յերկուքին վրայ եւս կդրուի, զոր օրինակ.

Զմահու փարատեաց զերկիւղ:

Զփառացն Աստուծոյ տեսին զհանդէս:

Աղաչեմ ճանաչել իմաստութեամբ զաստիճանին զոր ունիք, զքահանայութիւնն եւ զգործ:

Գ. Երբեմն եւս յատկացեալն զօրութեամբ կդրուի եւ նորա նախդիրը յատկացուցչին վերայ կյաւելցուի, ինչպէս.

Մատակարարեցէն զժողովրդեանն Աստուծոյ, եւ զԱստուծոյն ժողովրդեանն. այսինքն՝ զաղօթս ժողովրդեան, եւ զպարգեւս Աստուծոյ:

Որ զՔրովբէիցն խորհրդեամբ կերպարանիմք. այսինքն զնմանութիւն Քրովբէիցն:

Տուք զկայսերն՝ կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ. այսինքն՝ զհարկն կայսեր եւ զփառս Աստուծոյ:

Փոխանակ զիւրն տալոյ կարօտելոցն, զնոցայն յափշտակէ. այսինքն զինչս նոցա:

---



# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԸՆԴ ԳՈՅԱԿԱՆԱՑ.

Հ. Զի՞նչ պարտ է գիտել ածական եւ գոյական անուանց միմեանց հետ համաձայնութեան վերայ.

Պ. Զայս պարտ է առ հասարակ գիտել որ եթէ ածական անունը յառաջ դրուի գոյականէն՝ չհամաձայնիր գոյականի հետ ոչ թուով եւ ոչ հոլովիւ, զոր օրինակ.

Անապական պտղոյն արժանի եղեն.

Իսկ եթէ գոյականէն ետքը դրուի՝ կհամաձայնի, զոր օրինակ.

Նմանեցաք մեք մարդոյ անմտի:

Տրթունք իմաստունք:

Զի՞նչ զօսա անուանեցիք, հովիւս հօտապահնիչս եթէ զգազանս կեղեքիչս խաշանց:

Բացառութիւն. Ուրեք ուրեք նախադաս ածականը եւս կհամաձայնի թուով եւ հոլովիւ յետադաս գոյականի հետ, մանաւանդ երբոր անոնց մէջ ուրիշ բառ եւս ընկնի, զոր օրինակ.

Առաքելականացն աշակերտեցան բանից:

Արեգակնայիցն յաղթէր ճառագայթից:

Սպասաւոր աստուածայնոցն կարգեցաւ գանձուց,

Խնդրեսցուք ի մարդասիրէն Աստուծոյ:

Ի սուրբ կուսէն Մարիամայ:

Ծանօթութիւն. Սոյն կանոնաց պէս կհամաձայնին նաեւ ածական դերանունք, թուական անունք եւ ընդունելութիւնք գոյականի հետ:

## ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ

### ՈՂ ԵՒ ԻՉ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ.

Հ. Ող եւ ինչ վերջաւորութիւնքը ո՞ր հոլովը խնդիր կառնուն.

Պ. Ող եւ ինչ վերջաւորութիւնքը որ ածական են՝ կառնուն խնդիր սեռական եւ հայցական հոլովները, ինչպէս.

Նախապատմող մարգարէից զխոնարհիլդ քո յերկնից։
Ո՛չ սիրողաց զեղբարս։
Զպատուիրանս պահողացն.
Խնամող արարածոց։
Նորոգող տիեզերաց։
Մեղքն է թառամեցուցիչ զուարթութեան։
Փրկիչ աշխարհի։
Հուր ծախիչ զխոտս մեղաց։
Ետուն մեզ զգեղմն ընդունիչ զցօղն երկնային։

---

## ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ԲԱՅԻՑ.

Հ. Էական բայք ո՞ր հոլովը խնդիր առնուն.

Պ. Էական բայք խնդիր առնուն ուղղական եւ նախդրիւ տրական հոլովները, ինչպէս՝

Ես եմ որթն ճշմարիտ եւ հայր իմ մշակ է։
Ես եղեց ձեզ ի հայր։

Հ. Ներգործական բայք ո՞ր հոլովը խնդիր առնուն.

Պ. Ներգործական բայք խնդիր առնուն հայցական հոլովը, ինչպէս.

Ուտեմ զհաց։
Ճանաչեմ զինսն։



Հ. Կրաւորական բայք։

Պ. Կրաւորական բայք առնուն խնդիր բացառական հոլով, զոր օրինակ.

Ճանաչիմ յինոցն։
Բժշկիմք ի բարւոյն։

Երբեմն ալ հայցական, բայց գործիականի նշանակութեամբ, ինչպէս.

Ամաչեցին զամօթ մեծ, այսինքն ամօթով մեծաւ։

Նախանձեցայ զբարւոք նախանձն, այսինքն բարւոք նախանձու։

Զի մի կորիցիմք անապաշխար զյաւիտենական կորուստն, այսինքն յաւիտենական կորստեամբ։

Հ. Չեզոքական բայք ո՞ր հոլովը խնդիր առնուն.

Պ. Չեզոքական բայք խնդիր առնուն նախդրիւ տրական հոլովը, ինչպէս.

Երթամ ի տուն։
Շրջիմ ընդ երկայնութիւն դաշտօրէից։

Չեզոքական բայք առնուն նաեւ խնդիր զանազան հոլով ըստ պահանջման տեղւոյն, ինչպէս.

Գայ յերկնից։
Սպասեմ զաշտեան։

Հ. Հասարակ բայք ո՞ր հոլովը խնդիր առնուն.

Պ. Հասարակ բայք եթէ ներգործական բայի մաքով վարին՝ առնուն խնդիր հայցական հոլով, ինչպէս.

Կոյսն Մարիամ ծնաւ զՅիսուս։
Մի ոք դատեսցի զընկեր իւր։

Իսկ եթէ կրաւորականի մաքով վարին՝ առնուն խնդիր բացառական հոլով, զոր օրինակ.

Ծնաւ Յիսուս ի Կուսէն Մարիամայ։
Զի մի եւ ինքն դատեսցի ի նմանէ։

---

## ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆ ԲԱՅԻՑ ՈՄԱՆՑ.

Բայքս՝ վաճառել, գնել, վարձել (ֆիրայով քոնել), ի վարձու տալ, սակ արկանել (գին կտրել), առնուն խնդիր սեռական հոլով, ինչպէս.

Գնեաց յիսուն դանեկանի. կամ ընդ յիսուն դահեկանի:

Ի վարձու կալաւ հինգ ցեր ոսկւոյ:

Ո՞չ դանեկանի միոջ սակ արկեր ընդ իս. կամ ընդ դահեկանի միոջ:

Բայքս՝ հարկանել, զարկանել, բեկն ածել, պահանջեն սեռական հոլով հանդերձ զ-իւ, զոր օրինակ.

Ծափս զծափի հարկանել:

Զարկան զգետնի, զքարի. զանի, եւ զանօթի հարին:

Զի մի երբէք հարցես զքարի զոտն քո:

Զվարդապետի իմաստնոյ թեկն ածեմք. — իմաստուն վարդապետի սէս երեւնալ կջանամք:

Բայքս՝ հեծեծիմ, անամ, ակնունիմ, վիճակիմ, հաւանիմ, տեղեկանամ, տիրեմ, վկայեմ, պարապիմ, առնուն վերջահոլով տրական, ինչպէս.

Հրամանի նորա անսայ ամենայն ինչ:

Ակնունիմ քարեաց:

Վիճակեցաք ախտալից մարմնոյ:

Վկայեն բանից իմոց եւ գործք քո:

Երբեմն եւս պատմական հոլով, ինչպէս.

Զորմէ վկայեաց Յովհաննէս:

Բայքս՝ նախանձիմ, հիանամ, զարմանամ, առնուն նախդրիւ տրական, զոր օրինակ.

Հիացեալ ընդ իս ընդ անհաս մարդասիրութեանդ:

Մի նախանձիր ընդ չարս:

Զարմանք կալան զամենեսին ընդ վարդապետութեանն նորա:



Բայքս՝ գթալ, խնայել, երդնուլ, առնուն նախդրիւ տրական հանդերձ նախադրութեամբս ի: Գթամ ի ձեզ:

Երդուեալ է իմ ի Միհր Աստուած:

Բայս՝ հաւատամ (ինանըրըմ), առնու հայցական հոլով, ինչպէս.

Հաւատամք զՀայրն Աստուած՝ անեղ եւ անծին:

— Հաւատամ (դայանըրըմ), առնու նախդրիւ տրական:

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ:

Բայս՝ ողբամ առնու հայցական հոլով, ինչպէս.

Ողբամ զքեզ Հայոց աշխարհ:

Բայքս՝ պատմել, ճառել, ամբաստանել, բողոքել, շառախօսել, ասել, կախել, զոհանալ, բուռն հարկանել, կալնուլ, հոգալ, տրտնջել, քրթմնջել, պահանջեն պատմական հոլով, զոր օրինակ.

Կախեսցէ զքեզ զփայտէ:

Այր իւրաքանչիւր պատմէր զանցիցն:

Գոհանամք զքէն տէր:

Բուռն հար զգլխոյ առթից զվարսից:

Կալաւ զաջոյ ձեռանէ նորա:

Տրտնջէին զնմանէ Հրէայքն:

Բայքս՝ ծիծաղիլ, գերազանցիլ, զանց առնել, անցանել, ապախտ առնել, անփոյթ առնել, առնուն պարառ. հոլով.

Եւ տէր ծիծաղեսցի զնոքօք:

Գերազանցել զամենեքումբք:

Զանց առնել զպատուիրանաւ:

Անցանել զօրինօք:

Անցեալ զաւուրբք:

Բայս՝ անցանել, երբ նշանակէ նախապատուողութիւն, առնու նախդրիւ տրական հանդերձ նախադրութեամբս ընդ, զոր օրինակ:

Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր:

## ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ

### ԸՆԴ, ԸՍՏ, ԱՌ, ԱՌԸՆԹԵՐ ՁԱՆԱՁԱՆ ՀՈԼՈՎՄԱՆՑ.

ԸՆԴ՝ սեռականի հետ՝ կնշանակէ փոխանակ, գին, համար.

Ընդ իմ եւ ընդ քո. — իմ տեղն ու քու տեղը:

Ընդ երեսուն արծաթոյ. — երեսուն արծաթի գնով:

Ընդ ամենայն դատարկ բանի. — ամենայն դատարկ բանի համար:

— Տրականի հետ՝ նշանակէ հետը, վրայ.

Ընդ Աբրահամու. — Աբրահամու հետ:

Ընդ իս. — իմ հետս:

Ընդ որս. — նոցա հետը:

Ընդ մեծատանց անիրաւութիւն եւ ընդ աղքատաց հպարտութիւն, — մեծատանց անիրաւութեան եւ աղքատաց հպարտութեան վերայ:

— Աներեւոյթ բայի հետ՝ կյայտնէ ժամանակ.

Ընդ յառնել Փրկչին. — Փրկչին յարութիւն առած ժամանակը:

— Գործիականի հետ՝ կնշանակէ տակը.

Ընդ պարտիւք. — պարտքի տակ:

Ընդ ծառով. — ծառի տակ:

ԸՍՏ՝ վերջանոլով տրականի հետ կնշանակէ պէս (կէօրէ).

Ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան. — մեր պատկերին ու նմանութեանը պէս:

Ըստ կամաց քոց. — քու ուզածիդ պէս:

— Բացառականի հետ կցուցընէ ժամանակ.

Ամ ըստ ամէ. — տարուէ տարի:

Օր ըստ օրէ. — օրէ յօր:

— Ելանել եւ անցանել բայերուն հետ կնշանակէ դուրս.

Անցանել ըստ սահման:

Ըստ չափ սահմանէն. — չափէն դուրս ելլել:



ԱՌ՝ սեռականի հետ կնշանակէ վասն, առջեւը.

Առ իմոյ յիշատակի. — իմ յիշատակին համար:

Առ նախանձու. — նախանձութեան համար:

Առ խաչին. — խաչին առջեւը:

Առ դրան. — դրան առջեւը:

— Վերջանոլով տրականի հետ կցուցընէ մօտը, բովը.

Առ մեզ ագիր. — մեր մօտ իջիր:

— Նախդրիւ տրականի եւ աներեւոյթ բայի հետ կնշանակէ վասն.

Առ սէր Քրիստոսի. — Քրիստոսի սիրոյն համար:

Առ ի դարձուցանել. — դարձընելու համար:

— Եւս եւ կնշանակէ պէս.

Առ իմաստունս ունել զանձն. — ինքզինքը իմաստունի տեղ դնել:

— Բացառականի հետ՝ նոյնպէս վասն.

Առ ի չգոյ. — չլինելուն համար:

— Գործիականին հետ՝ կցուցընէ Ա. Բաղդատութիւն:

Զինչ է գանձ ոսկւոյ առ գանձու գիտութեան. — գիտութեան գիմացը ոսկին ինչ է որ:

Զինչ է յարդ առ ցորենով. — ցորենին դիմացը թուպանը ինչ է որ:

Կամ նախդրիւ տրականաւ.

Զինչ են աշխարհական մեծութիւնքն առ հոգեւոր փարթամութիւն:

Բ. Կյայտնէ ժամանակ.

Առ երջանկութեամբ բազումք լինին բարեկամ (մարդուս). — բաղդաւորութեան ժամանակը բարեկամ շատ կգտնուի:

Առ Աբիաթարաւ քահանայիւ. — Աբիաթար քահանային ժամանակը:

Գ. Մօտը, եզրը (քէնարը), վերայ.

Առ լերամբ. — լերան մօտ.

Առ ծովեզերբն. — ծովին եզերքը:

Առ ճանապարհաւ. — ճանապարհին վերայ:

## ՆՇԱՆԱԳԻՐՔ ԿԷՏԱԴՐՈՒԹԵԱՆ.

Հ. Կէտադրութեան նշանները որո՞նք են.
Պ. Սոքա. բութ ('), ստորակէտ (,), միջակէտ (.) եւ վերջակէտ (:):

Հ. Այս կէտերն ո՞ւր կը դրուին.
Պ. Ա. Բութը կդրուի այն բառին վերայ, ուր որ ձայնը շատ քիչ ատեն կանգ առնելու պէս պիտի ընէ, որ բառ բառի հետ չխառնուի եւ իմաստը չշփոթի, ինչպէս. Բոլոր մարմնոյս՝ հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ եւ հոգւոյ՝ միտք են կառավար: Այլք իմաստութիւն մարդոյ են, եւ հասակ ծերութեան՝ կեանք անարատ:

Բ. Ստորակէտը կը դրուի այն ժամանակ, երբ խօսքի մը կտորը խիստ անկատար է, ու ետեւէն բան մը կուզէ. կամ թէ ուր որ պէտք է անկատար խօսքերը մէկմէկէ բաժանել՝ առանց իմաստը վերջացընելու. ինչպէս՝ Երբ զառաքինութիւն գործիցեմք, հաղորդիմք յուսոյ հանդերձելոցն: Որք վիրաւորին ի պատերազմի առ մերում, դեղ նոցա ապաշխարութիւնն է:

Գ. Միջակէտը կը դրուի որոշուած խօսքէն յետոյ, որ ետեւէն ուրիշ կտոր ալ ունի. ինչպէս՝ Դուք էք աղ երկրի. ապա եթէ աղն անհամի, իւ յաղիցի:— Միջակէտ կդրուի նաեւ այն տեղերը՝ ուր որ ուրիշի խօսքը մէջ կբերուի՝ առանց թէ կամ զի շաղկապի. եւ այնպիսի ժամանակ խօսքը գլխագրով կսկսի, ինչպէս. Խրատէր զնոսա եւ ասէր. Պատուեա զհայր քո եւ զմայր:



Դ. Վերջակէտը կը դրուի այն ժամանակ երբ որ խօսքն ամբողջ լմընցած է, ու տուն կասուի. ինչպէս՝ Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ:

Հ. Ուրիշ ի՞նչ նշանագծեր կբանին մեր հայկական գրուածոցը մէջ.
Պ. Այս նշանագծերը. շեշտ ('), երկար (˜), պարոյկ (˚). այլ եւ ենթամնայ (-), ապաթարց ('), չակերտ (« ») եւ փակագիծ ( ):

Հ. Սոցա ամեն մէկը ո՞ւր կը դրուի.
Պ. Ա. Շեշտը կը դրուի այն վանկին վերայ, ուր ձայնը ուժով կզարնուի եւ բարձր կը հանուի. ինչպէս՝ Ծառա՛յք, հնազա՛նդ լերուք: Բայց դու, ա՛րքայ, տո՛ւր իշխանութիւն: Լո՛ւր դու ինձ, իշխա՛նդ քաջ:

Բ. Երկարը կը դրուի այն ձայնարկութիւններուն եւ անուններուն վերայ, ուր որ կիրքին յարմար երկըննալու է ձայնը. ինչպէս՝ Ո՜հ, կարճ է առասպելս: Տէ՜ր տէր մեր, զի՜ սքանչելի է անուն քո: Ո՜վ, քանի՜ ահագին են:

Գ. Պարոյկ կամ ոլորակը միայն ձայնաւոր գրոց վերայ կը դրուի, ուր հարցական կերպով մարդուս ձայնը ոլորելու պէս կլինի. ինչպէս՝ Միթէ մա՞րթ ինչ իցէ: Կերա՞ր արդեօք ի նմանէ: Ի՞մ իմիք ազդիցէ այնուհետեւ: Զի՞նչ արարեր: Ընդէ՞ր ոչ խօսիս:
Դ. Ենթամնան կը դրուի այն ժամանակ՝ երբ պէտք է տողադարձ ընել, այսինքն տողին վերջը մնացած բառին մէկ կտորը կամ կէսը վարի տողն անցընել. ինչպէս՝ Բա-րի, եր-կիր, ման-րիմ, վարձ-կան, նորա-նշան, ան-բնական, Վարդ-գէս-ուան, եւ այլն:

*Ե. Ապաթարցը այն ժամանակ կը գրուի երբոր պէտք լինի երկու ձայնաւորի անախորժ հանդիպումը կտրել. ինչպէս՝ ապ՝ եթէ, նա՝ ւանիկ, զորս գլխաւորապէս քանաստեղծները կբանեցնեն: Աշխարհաբառի մէջ ապաթարց կը գրուի միայն այն տեղերը՝ ուր երկու քով քով եկող ձայնաւորներուն մէկը դուրս կը ձգուի. ինչպէս՝* բան մ՝ ալ *(բան մի ալ),* կ՝ ուրանայ *(կը ուրանայ) եւ այլն:*

*Զ. Չակերտը կը գրուի խօսքին սկիզբն ու վերջը մէկնողական խօսքերու մէջ, կամ ուրիշի խօսքը մէջ բերելու ժամանակ. ինչպէս՝ «Ազատակրօն, ասէ Ագաթանգեղոս, խառնիճաղանճ ամբոխին հանդերձ զմիմեամբք դիզանէր»: Սկսաւ սպարապետն (Վարդան) խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն եւ ասէ. «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ, եւ ձեր ընդ իս. է ուրեք, զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է ուրեք զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է որ յաղթող գտեալ եմք եւ ոչ յաղթեալք»:*

*Է. Փակագիծը կը գրուի այն խօսքին վրայ, երբ պէտք է միջանկեալ խօսքը քովի խօսքերէն զատել ու ամփոփել. ինչպէս՝ «Թէպէտ եւ ի գործ արուեստին զբաղեալ էին, (եւ գիտէք իսկ թէ զինչ քաղցըր եւ պատիր ձկնորսութիւնն էր), սակայն ոչինչ դանդաղաեցան»:*

*Ը. Ասոնցմէ զատ ուրիշ նշանագծեր ալ կան մեր գրուածոց մէջ.*

*Թ. Այս. ինչպէս մակակէտն (') ու երկոբեակը ("), որք այժմ գործածութենէ դուրս ձգուելով, աւելորդ կհամարիմք վերաները խօսել:*

---



## ՕՐԻՆԱԿ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

### ԸՍՏ ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ.

Հրեշտակք երկնից փափաքին հանդիսի կատարման նոցա, որք ի մահուն իւրեանց կենդանացան, ելին ի կամարն երկնից խառնեցան ի գունդ զուարթնոցն:

Հրեշտակք — *ենթակայ.*

Երկնից — *յատկացուցիչ հրեշտակաց.*

Փափաքին — *ստորոգեալ.*

Հանդիսի — *խնդիր բայիս փափաքին.*

Կատարման — *յատկացուցիչ հանդիսին.*

Նոցա — *յատկացուցիչ կատարման.*

Որք — *ենթակայ.*

Ի մահուն — *խնդիր բայիս կենդանացան.*

Իւրեանց — *յատկացուցիչ մահուան.*

Կենդանացան — *ստորոգեալ, որոյ ենթական է՝ որք.*

Ելին — *ստորոգեալ, որոյ ենթական է՝ որք.*

Ի կամարն — *խնդիր բայիս ելին.*

Երկնից — *յատկացուցիչ կամարին.*

Խառնեցան — *ստորոգեալ, որոյ ենթական է՝ որք.*

Ի գունդ — *խնդիր բայիս խառնեցան.*

Զուարթնոցն — *յատկացուցիչ գնդին:*

*Հ. Ո՞յք են որ փափաքին. — Պ. Հրեշտակք.*

*(Որոյ) Հրեշտակք. — Երկնից:*

*Երկնից Հրեշտակք զինչ առնեն. — Փափաքին.*

*Զի՞մ փափաքին. — Հանդիսի:*

*Որո՞յ Հանդիսի. — Կատարման:*

| | |
|---|---|
| *Որո՞ց կատարման.* | *Սոցա, այսինքն որք ի մահուն իւրեանց կենդանացան, ելին ի կամարն երկնից, խառնեցան ի գունդ զուարթնոցն:* |
| *Ի մահուն զի՞նչ եղեն.* | *Կենդանացան:* |
| *Ե՞րբ.* | *Ի մահուն:* |
| *Յորո՞ց մահուն.* | *Յիւրեանց:* |
| *Յետոյ զի՞նչ արարին.* | *Ելին եւ խառնեցան:* |
| *Ո՞ւր ելին.* | *Ի կամարն:* |
| *Յորո՞ց կամարն.* | *Երկնից:* |
| *Յո՞ խառնեցան.* | *Ի գունդ:* |
| *Յորո՞ց գունդն.* | *Զուարթնոց:* |
| *Ո՞յք են որք ի մահուն իւրեանց կենդանացան ելին ի կամարն երկնից, խառնեցան ի գունդ զուարթնոցն.* | *Որք:* |



# ԱՆՈՒԱՆՔ

## ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԻՑ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ

| *Հայերէն.* | *Ռուսերէն.* | *Գաղղիերէն.* |
|---|---|---|
| Քերականութիւն. | грамматика. | grammaire. |
| Գիր. | буква. | lettre. |
| Ձայնաւոր. | гласное. | voyelle. |
| Բաղաձայն. | согласное. | consonne. |
| Վանկ. | слогъ. | syllabe. |
| Բառ. | слово. | mot. |
| Բարդ. | сложное. | composé. |
| Ածանցական. | производное. | dérivé. |
| Անուն. | имя. | nom. |
| Գոյական. | существительное. | substantif. |
| Յատուկ (անուն). | собственное (имя). | (nom) propre. |
| Հաւաքական. | собирательное. | collectif. |
| Ընդհանուր. | нарицательное. | appellatif. |
| Սեռ. | родъ. | genre. |
| Արական. | мужское. | masculin. |
| Իգական. | женское. | féminin. |
| Հասարակ. | общее. | } չունի. |
| Չեզոքական. | среднее. | |
| Թիւ. | число. | nombre. |
| Եզակի. | единственное. | singulier. |
| Յոգնակի. | множественное. | pluriel. |
| Ածական. | прилагательное. | adjectif. |
| Դրական. | положительное. | positif. |
| Բաղդատական. | сравнительное. | comparatif. |
| Գերադրական. | превосходное. | superlatif. |

| | | |
|---|---|---|
| Թուական բացարձակ. | числительное количественное. | numeraux cardinaux. |
| Թուական դասական. | числительное порядочное. | numeraux ordinaux. |
| Հոլով. | подежъ. | cas. |
| Հոլովումն. | склоненіе. | déclinaison. |
| Դերանուն. | местоименіе. | pronom. |
| Էական. | личное. | personnel. |
| Ցուցական. | указательное. | démonstratif. |
| Յարաբերական. | относительное. | relatif. |
| Հարցական. | вопросительное. | interrogatif. |
| Անորոշ. | неопредѣленное. | indèfini. |
| Բայ. | глаголъ. | verbe. |
| Ներգործական. | дѣйствительное. | actif. |
| Կրաւորական. | страдательное. | passif. |
| Չէզոքական. | среднее. | neutre. |
| Հասարակ. | общее. | ponominal. |
| Դիմազուրկ. | безличное. | impersonnel. |
| Կանոնաւոր. | правильное. | regulier. |
| Անկանոն. | неправильное. | irregulier. |
| Դէմք. | лице. | personne. |
| Եղանակ. | наклоненіе. | mode. |
| Սահմանական. | изъявительное. | indicatif. |
| Հրամայական. | повелительное. | imperatif. |
| Աներեւոյթ. | неопредѣл. | infinitif. |
| Ժամանակ. | время. | temps. |
| Ներկայ. | настоящее. | présent. |
| Անկատար. | прошедшее несовершенное. | imparfait. |
| Կատարեալ. | — совершенное. | passé. |
| Ապառնի պարզ. | будущее простое. | futir simple. |
| Ապառնի բաղադրեալ. | — сложное. | — composé. |
| Լծորդութիւն. | спряженіе. | conjugaison. |



| | | |
|---|---|---|
| Ընդունելութիւն. | причастіе. | participe. |
| Նախադրութիւն. | предлогъ. | préposition. |
| Մակբայ. | нарѣчіе. | adverbe. |
| Շաղկապ. | союзъ. | conjonction. |
| Միջարկութիւն. | междометіе. | interjection. |
| Կանոն. | правило. | règle. |
| Ծանօթութիւն. | примѣчаніе. | remarque. |
| Բացառութիւն. | исключеніе. | exception. |
| Զոր օրինակ. | напримѣръ. | par exemple. |
| Լուծումն. | разборъ | analyse. |

ԳԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. публ. библиотека ՀԱՅՍՍՀ-ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

# ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ


Էջ.

Քերականութիւն. . . . . . . . . . . . . . . . . 5

Անուն . . . . . . . . . . . . . . . . . 7

Պարագայք անուան. . . . . . . . . . . . . . 9

Թիւ անուան. . . . . . . . . . . . . . . 10

Հոլովք անուան . . . . . . . . . . . . . . 11

Հոլովմունք անուանց . . . . . . . . . . . . 13

Արտուղի հոլովումն անուանց. . . . . . . . . . 20

Դերանուն. . . . . . . . . . . . . . . . 23

Բայ. . . . . . . . . . . . . . . . . 32

Անկանոն բայք . . . . . . . . . . . . . . 44

Ընդունելութիւն . . . . . . . . . . . . . . 45

Նախադրութիւն . . . . . . . . . . . . . . 47

Մակբայ . . . . . . . . . . . . . . . . 48

Շաղկապ . . . . . . . . . . . . . . . . 49

Ձայնարկութիւն . . . . . . . . . . . . . . 50

Օրինակ քերականական լուծման. . . . . . . . . . 51

Համաձայնութիւն . . . . . . . . . . . . . 52

Նշանագիծք կէտադրութեան . . . . . . . . . . 61

Անուանք գործածական բառից քերականութեանս . . . 67


# ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

| Էջ. | Տող. | Փոխանակ դնելու. | Դրուած է. |
|---|---|---|---|
| 4 | 9 | առ. ընբեր հոլովուց , | առ. ընբեր հոլովմանց. |
| 8 | 24 | գոյականի , | կրկնի. |
| 8 | 26 | վերջը , | վերջքը. |
| 11 | 5 | բազմողք , | բազմովք. |
| 30 | 4 | թուական անուանք , | թիւք անուանց. |
| — | 25 | երկոցունց , | երկոքումբք. |
| 47 | 8 | հոլովառու նախադրութիւնք , | հոլով՛՛ նախդիրք. |
| 54 | 19 | խորհրդաբար , | խորհրդեամբ. |
| 57 | 16 | երթամ ի տուն , | երթամ ի տան. |
| 58 | 27 | մարդասիրութիւնդ , | մարդասիրութեանդ. |
| — | 29 | վարդապետութիւն , | վարդապետութեան. |
| 60 | 28 | ըստ չափ , | ըստ չափ սահմանին . |
| 61 | 15 | առ. ի չգոյէ , | առ. ի չգոյ. |

2013 2879
ՀՀ Ազգային գրադարան
NL0059682